Azg
armenian daily
4 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1999 ՇԱԲԱԹ 207 (1953)

Հոգեհանգստյան պատշաճ՝ Ազգային ժողովում զոհված պետական այրերի հառաստնքի առիթով

Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի բարձր կարգադրությամբ դեկտեմբերի 5-ին, կիրակի, Հայաստանի, Արցախի եւ սփյուռքի հայոց բոլոր եկեղեցիներում հավարս Սբ. Պատարագի կկատարվի հոգեհանգստյան մասնավոր պատշաճ հոկտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում ողբերգական դեպքերի հետեւանքով զոհված պետական այրերի մահվան հառաստնքի առիթով:

Սբ. Էջմիածնի Մայր Տաճարում հոգեհանգստյան արարողությունը կնախագահի Ամենայն հայոց Գարեգին Բ կաթողիկոսը:

ՄՍՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Արամ Սարգսյան. «Ես ինձ ազատ մարդ եմ համարում»

ԱԺ-ն վարչապետ Արամ Սարգսյանի կառավարությանը տվեց վստահության քվե

ՆԱԲԻԼԵ ԳԻԼԲԱՐՅԱՆ

Երեկ 10 անց 20 խորհրդարանը հանդիպեց վարչապետ Արամ Սարգսյանի թիմին եւ առաջադրեց իր բարի կամքը: Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն, Արամ Սարգսյանի կառավարությունը ստացավ վստահության քվե, եւ ոչ մի պատգամավոր անվստահություն հայտնելու վերաբերյալ փաստաթուղթ չհանձնեց ԱԺ ղեկավարությանը: Նոր վարչապետի ներկայացրած գործունեության ծրագիրը, ինչպես հավաստել են, Հայաստանի զարգացման տնտեսական հայեցակարգը չի ամբողջացնում, եւ տնտեսական գերակայությունների վերաբերյալ Հայաստանը դեռեւս անորոշության մեջ է: Հստակ են միայն քաղաքական գերակայությունները. «Պետական համակարգը պետք է դրսեւորի իր գործունակությունը ցանկացած իրավիճակում՝ որքան էլ որ մեծ է անհատների դերն ու նշանակությունը դրանում»:

Երբ ծրագիրը լուռ հավանության արժանացավ, լրագրողները վարչապետին առաջարկեցին պարզաբանել, թե ե՞րբ խորհրդարան կբերվի 2000 թ. պետբյուջեն, ուր, ինչպես խոսանում են կառավարության բոլոր անդամները, ամփոփված կլինի մեր տնտեսական զարգացման ուղեգիծը. Արամ Սարգսյանը խուսափեց որոշակի օր մատնանշելուց՝ դարձյալ վկայակոչելով մոտալուտ աղագան. «Բյուջեի նախագիծը վերամշակման փուլում է գտնվում, դա կապված է այս տարվա բյուջեի կատարման հետ», ասաց նա: Կարող ենք ենթադրել, որ կառավարությունը փորձում է պարզել իր հնարավորությունների իրական սահմանը, այսինքն որքան եկամուտ կկարողանա հավաքել այսօր, ըստ այդմ էլ կձեւակերպվի 2000 թ. եկամտային եւ ծախսային հարաբերակցությունը:

Տես էջ 2

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Հայաստանի ԱԳ նախարարը կայցելի Մոսկվա եւ Թեհրան

ԵՐԵՎԱՆ, 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆՍՐՔ: Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը դեկտեմբերի 6-ին աշխատանքային այցով կժամանի Մոսկվա: Դեկտեմբերի 7-ին Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը կժամանի Թեհրան: Այդ մասին հաղորդեցին ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ կապերի վարչությունից:

Նախատեսվում է, որ Ռուսաստանի եւ Իրանի արտգործնախարարներ Իգոր Իվանովի եւ Քամալ Խարազիի հետ հանդիպումների ժամանակ Վարդան Օսկանյանը կքննարկի երկկողմ համագործակցությանը, ինչպես նաեւ հետսամբուլյան իրավիճակին ու վերջինիս զարգացման հեռանկարներին առնչվող հարցեր:

Դեկտեմբերի 9-ին Հայաստանի արտգործնախարարը կվերադառնա Երեւան:

Նշենք, որ դեկտեմբերի 7-ին նախատեսվում է Հայաստանի վարչապետ Արամ Սարգսյանի այցը Ռուսաստանի մայրաքաղաք:

Արդունի մարտերում 200 զրոհային է զոհվել

ՍՈՉՈՒՄ, 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Չեչենական Արդուն քաղաքի համար մղվող մարտերի ժամանակ, որ գտնվում է Գրոզնուց 10 կմ արեւելք, քաղաքը պաշտպանող զրոհայինները կորցրել են մոտ 200 մարդու, այդ թվում 4 դաշտային հրամանատարների, հաղորդել են զինվորական աղբյուրները: Դրա հետ մեկտեղ Ռուսաստանի ՀՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ Վալերի Մանիլովը լրագրողներին հայտնել է, որ Արդունի գրավման ժամանակ սպանվել է 4 եւ վիրավորվել 34 զինծառայող. Հյուսիսային կողմից դաշտային զորքերի միացյալ խմբավորման արեւելյան ուղղության զորամասերը լիովին շրջափակել են Արդունը: Այդ գործողությանը մասնակցում է դեսանտային-զրոհային գունդը գնդապետ Յուրի Էմի գլխավորությամբ: «Արդունը Գրոզնու «բանալին» է, ինչպես նաեւ թիվ է բացում դեպի Չեչնիայի լեռնային շրջաններ», ասել է Էմը: Նա նշել է ամրությունների «լուրջ բնույթը», որ ստեղծել են զրոհայինները այդ չեչենական քաղաքի մատույցներում:

Ալիեւը հրաժարվեց ազգային հերոսի կոչումից

ԲԱԿՈՒ, 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՓՐԱՅՍ ՆՅՈՒՍ: Միլի մեջլիսի 44 պատգամավորներ դիմել են պատմական խնդրանքով՝ ճնշելու երկրի նախագահ Հեյդար Ալիեւին Ադրբեջանի ազգային հերոսի կոչում շնորհելու հարցը. Միլի մեջլիսի ուրբաթ օրը կայացած նիստում հայտնել է խորհրդարանի խոսնակ Մուրբուզ Ալեսքերովը: Հեյդար Ալիեւը, որի հետ խորհրդարանի նախագահը զրույց է ունեցել, երախտագիտություն է հայտնել պատգամավորներին ուշադրության համար, բայց կտրականապես հրաժարվել է բարձր կոչումից: Մինչ այդ երկրի նախագահին ազգային հերոսի կոչում շնորհելու հարցը տեւականորեն ճնշարկվում էր ադրբեջանական մամուլում:

Անդրե Թաբուրյանը լիբանանահայ կուսակցությունների միակ թեկնածու խորհրդարանում

Լիբանանում հայտնի գործարար, 70-ական թթ. Լիբանանի խորհրդարանի երեսփոխան Անդրե Թաբուրյանն ամենայն հավանականությամբ «ընտրվելու» է խորհրդարանի պատգամավոր, գրավելու համար Խաչիկ Պաղիկյանի մահվամբ թափուր մնացած հայ պատգամավորական աթոռը: Բեյրութից մեր ստացած տեղեկությունների համաձայն, Թաբուրյանի թեկնածությունն են առաջադրում եւ պատշաճանում լիբանանահայ երեք կուսակցությունները ՍԴՀԿ, ՀՅԴ եւ ՌԱԿ: Երեւույթն ազգային միասնության տեսակետից հետաքրքրական է, եթե նկատի ունենանք, որ Անդրե Թաբուրյանը դաշնակցականամետ գործիչ է եւ նախապես եղել է այդ կուսակցության ներկայացուցիչներից մեկը Լիբանանի խորհրդարանում: Երբ կուսակցությունների միացյալ որոշումը կայացվել է նրանց համատեղ նիստում: Եվ եթե նկատի ունենանք, որ մեր երբ կուսակցությունների որոշմամբ որեւէ այլ թեկնածու չի առաջադրվելու թափուր տեղի համար, ապա պարզ կդառնա, որ ըստ էության ընտրություններ տեղի չեն ունենա, եւ Թաբուրյանը կանցնի խորհրդարան առանց խոչընդոտի:

«Նաիրիտ» առանց նախագահի

Ըստ հավաստի տեղեկությունների, «Նաիրիտ» ՓԲԸ խորհրդի նախագահ Հովի. Մանդակունին աշխատանքից ազատվել է սեփական դիմումի համաձայն: Դա տեղի է ունեցել ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախկին նախարար Հայկ Գեւորգյանի պաշտոնանկությունից հետո: Հիշեցնենք, որ Հովի. Մանդակունին մինչ այդ «Հայխնայբանկի» կառավարիչն էր եւ այդ պաշտոնից ազատվել էր վարչապետ Վազգեն Սարգսյանի ցանկությամբ: Պաշտոնը էլեկտրաէներգիայի վարձավճարների գանձման ժամանակ «Հայխնայբանկում» բաժանորդներից լրացուցիչ 90 դրամ գանձելու նրա հրահանգն էր: Սակայն որոշ ժամանակ անց Հովի. Մանդակունին դարձավ «Նաիրիտի» նախագահ: Նրա, արդեն այս աշխատանքից ազատվելուց հետո ընկերության խորհրդի նոր նախագահը դեռեւս չի ընտրվել: Ա. Մ.

Գորենկոն 100000 ռուբլի է փոխհատուցելու Լուժկովին

ՄՈՍԿՎԱ, 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Օստանկինոյի միջմունիցիպալ դատարանն այսօր բավարարել է Մոսկվայի քաղաքագլուխ Յուրի Լուժկովի հայցը ՕՌՏ հեռուստաընկերության եւ հեռուստահաղորդավար Սերգեյ Գորենկոյի նկատմամբ: Ըստ ԻՏԱՌ–ՏԱՍՍ-ի հաղորդման, հայցվորի պահանջով դատարանը պատասխանողներին պարտավորեցրել է դատարանի վճռի կայացման օրվանից ի վեր յոթնօրյա ժամկետում հերքել Սերգեյ Գորենկոյի մի շարք արտահայտությունները՝ որոնցում Յուրի Լուժկովի «պատիվն ու արժանապատվությունն արատավորող»:

Բացի դրանից, դատարանը պարտավորեցրել է որոշես բարոյական վնասի փոխհատուցում բռնագանձել ՕՌՏ-ից 50 հազար ռուբլի, իսկ Սերգեյ Գորենկոյից՝ 100 հազար ռուբլի:

Վճիռը կարող է գանգատարկվել Մոսկվայի քաղաքային դատարանում 10-օրյա ժամկետում:

ՀԱՍԱՐԱԿՈՒՄԱՐ

Վազգեն Սարգսյանը «Երկրապահի» հավերժ նախագահ

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը չմասնակցեց «Երկրապահի» 4-րդ համագումարին

Հուլիոս Կեսարն առաջնորդվում էր «Եկա, տեսա, հաղթեցի» սկզբունքով, հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը չօգտվեց «Երկրապահ» կամավորականների միության համագումարին մասնակցելու եւ 20 րոպե ողջույնի խոսք ասելու իրեն ընձեռված, կարծում ենք, լուրջ հնարավորությունից: Ողջույնի այդ խոսքը կարող էր կամուրջ դառնալ Հայաստանում բաժանվող երկու ափերի միջեւ: Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ողջույնի խոսքն ընթերցեց ԵԿՄ փոխնախագահ, Երեւանի քաղաքապետ Ալբերտ Բազեյանը, որի այս քայլը հարուցեց լսարանի սկզբում խուլ դժգոհությունը: Ռոբերտ Քոչարյանը խոստացավ «Երկրապահին» մինչեւ վերջ հետեւողական լինել եւ բացահայտել հոկտեմբերի 27-ի ահաբեկչության բոլոր մեղավորներին՝ պատժելով նրանց օրենքի ամենայն խստությամբ, կոչ անելով բանակին լինել մարտունակ եւ պահպանել հանրապետության սահմանները եւ անվտանգությունը: Բայց երկրապահները, որ կորցրել են իրենց սպարապետին, սպասում էին ոչ թե Բազեյանի կողմից ընթերցվող ուղերձին, այլ նախագահի անմիջական խոսքին, ճիշտ այնպես, ինչպես հոկտեմբերի 27-ին եւ 28-ին Հայաստանի ողջ հասարակությունը սպասում էր նախագահի ուղերձին: Այն ժամանակ նախագահն իրոք զբաղված էր լրջագույն քայլերով Հայաստանի կայունությ[illegible]նգնման ուղղությամբ. [illegible] ուշ մի քանի հեռ[illegible]ան լրագրողների [illegible]ղրված ասուլիսում [illegible]խոսքերը ուղարկած [illegible]

Տես էջ 2

digitised by A.R.A.R.@

ՈՒՇԱԳԻՐ

Սկիզբը էջ 1

Ալբերտ Բազեյանը սանձնեց նախագահի արդարացման դժվարին խնդիրը: **«Ազգը»** հետաքրքրվեց, թե ե՞րբ է որոշվել նախագահի մասնակցել-չմասնակցելու հարցի դասախանը. Ա. Բազեյանը դիվանագիտորեն դասախանեց, որ Ալեքսանդր Սդեպանիայանի անվան օդերայի դահլիճը չափազանց մեծ է, եւ համագումարին մասնակցելիք հրավիրյալների թիվն էլ ազդեցիկ, ուստի ոչ ոք չէր կարող երաշխավորել նախագահի անվտանգությունը, եւ այս տեսանկյունից էլ իրենք հախագահին: Հրաժարականի մասին կոչերից հետո Արամ Սարգսյանն իր մերձակա շրջապատով Վահան Շիրխանյան, Դավիթ Զադոյան, Գագիկ Ջհանգիրյան... լքեց համագումարի նիստերի դահլիճը, մի դահ դուրս եկան եւ Մանվել Գրիգորյանը, Մուրադ Կիրակոսյանը, Սեյրան Սարոյանը:

Մենք ենք այդ տղամարդը

Ռոբերտ Քոչարյանը սիրում է տղամարդկությանը վերաբերող այլաբանությունը, եւ դաշտանության նախարարության աշխատակազմի ղեկավար Սենիկ Պողոսյանը, հայտնի Քեռին, հրապարակեց գեղարվեստական մի ստեղծագործություն, ուր ցնդեց, թե ինքն է այն տղամարդը, որին փնտրում է Ռոբերտ Քոչարյանը: Նա համեմատեց նախագահին Իսրայել Օրու հետ, որն Արեւմուտքում դոնեդուռ ընկնելուց հետո ի վերջո «չոքում է Պետրոս Մեծի դռանը»: Քեռու այս խոսքերը միանշանակ վկայություն են, որ «Երկրապահի» դժգոհությունը Ռոբերտ Քոչարյանից ունի նաեւ արտաքին քաղաքական կողմնորոշումների ենթատեքստ [illegible] չէ, որ հռետորը միայն [illegible] քաղաքական եւ գործնական այլ համարեց վերջին շրջանում վարչապետ Վազգեն Սարգսյան[illegible] պաշտպանության նախարար Գարեգին Հարությունյանի Հայաստան բերված ռուսական «Միգ»-երը. «Իզուր է աթոռին կառչելու ցանավորությունդ, նախագահ... բանակը վարկաբեկելու գնով մի կառչեք աթոռից»: Այս բացականչությունները ուղեկցվում էին բուռն ծափահարություններով, իսկ երբ ԵԿՄ վարչության անդամ ծագումով Ֆրանսահայ ազատամարտիկ Հովսեփ Հովսեփյանը փորձեց հիշեցնել Ռոբերտ Քոչարյանին 98 թ. արտահերթ նախագահական ընտրությունները եւ դրանցում «Երկրապահի» ունեցած վճռորոշ դերակատարումը, երկրապահների դահլիճը դարձյալ ծափողջույններով ողողվեց: Հ. Հովսեփյանը երկընտրանքի հնարավորություն Ռոբերտ Քոչարյանին ընծեռեց՝ կամ դուք «Երկրապահի» հետ եք եւ բացահայտում եք ահաբեկչությունը, որ ազգային դավաճանություն է, կամ մեր ճանապարհները բաժանվում են:

«Երկրապահը» փնտրում է նոր առաջնորդ: Հայրակորույս եւ որդեկորույս այս կառույցը ներքին տվայտանքի մեջ է: Ուշագրավ է, որ ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանն իր ելույթում հիշեցրեց «Ղարաբաղ» կոմիտեի ու «Երկրապահի» ծագումնաբանական նույնությունը: Վազգեն Մանուկյանն առաջարկեց երկրապահներին չսեւեռվել առանձին անհատի վրա, արցախյան ազատամարտում տարած հաղթանակը եւ բանակի կայացումը բոլորիս հաղթանակն է: Այսօր ռազմաճակատը տնտեսական դաշտն է: Վազգեն Մանուկյանը չշրջանցեց նաեւ Արամ Սարգսյանի ներկայացրած կառավարության ծրագիրը, ուր խոսվում է 5,5 տոկոս տարեկան աճի մասին: Այսպիսի տնտեսական աճով մի քանի տասնամյակ անց էլ մենք առաջընթացի չենք հասնի, դա նման է 0-ն 2-ով բազմապատկելուն, իսկ 0-ն ցանկացած բազմապատկիչի հետ մնում է 0: Քեռի անվամբ հայտնի Սենիկ Պողոսյանի խոսքը միակն էր, ուր Ռոբերտ Քոչարյանի ու Վազգեն Մանուկյանի միջեւ հավասարություն դրվեց, եւ փաստացի 90 թ. մեր պետության ողջ ծախորդությունները բարդվեցին այս երկու դերակատարում ունեցած քաղաքական գործիչների ուսերին, հիշողությունից վանելով Լ. Տեր-Պետրոսյանին ու վերջինիս զինակիցներին: Գեներալ Մանվել Գրիգորյանը, որն այսօր ընտրվելիք ԵԿՄ վարչության նախագահի ամենահավանական թեկնածուն է, ինչպես նաեւ մյուս երկրապահները խանդավառությամբ չընդունեցին Քեռու այս հայտարարությունները:

«Մենք պիտի գործենք մտածված, բայց դա չի նշանակում լինել իներտ»

Մուրադ Կիրակոսյանն իր խոսքում ընդհանրացրեց «Երկրապահի» վիրավորանքը. «Այսօր քաղաքականությամբ կարող է զբաղվել ցանկացած ոք, քաղաքականությամբ զբաղվում են 5,5 անդամանոց կուսակցությունները, իսկ մեր ցանկացած քայլ գնահատում են իբրեւ հեղաշրջում»: Երկրապահները համոզված էին, որ իրենք չեն պատակտվելու եւ պետք է գործեն մտածված, սակայն դա չի նշանակում լինել. Մուրադ Կիրակոսյանի բնորոշմամբ, իներտ. «Ամեն ինչ պետք է անել երկիրը տնտեսական այս իրավիճակից դուրս բերելու, բանակը մարտունակ դարձնելու համար: Մինչեւ վերջ պիտի հասցնենք Վազգեն Սարգսյանի ծրագրերը, եւ այդ վերջ ասածը շատ հեռու չէ»: Գագիկ Գեւորգյանը եւս միանշանակ էր. «Բանակի ներսում «Բաժանիր, որ տիրես» սկզբունքն ի սկզբանե դասաղարտված է ծախողման: Պետական հեղաշրջման փորձը կանխելով, «Երկրապահը» եւ բանակը, որ բուն պետականության երաշխավորն են, թույլ չեն տա ոչ մի արկածախնդրի վտանգել այդ պետականությունը: Բանակն ամենադեմոկրատական կառույցն է: Ճիշտ լոբբինգային քաղաքականությամբ, մեր ունեցած եւ դեռ ընդլայնվելիք հնարավորություններով մենք մշտապես կարող ենք լինել առաջինը»:

Երկրապահների տրամադրությունների բանաձեւումը դարձավ 17:00-ին ծագած ընդոստացումը, երբ վերջին շարքերը միահամուռ ոտքի ելան եւ վանկարկեցին. «Հրաժարական, հրաժարական»: Ալբերտ Բազեյանը դարձյալ փորձում էր խաղաղեցնել. «Համագումարը միտինգ չէ, համագումարը այնտեղը չէ, ուր թույլ տանեն ոռակավորումներ», իսկ երբ շարքերը փորձեցին ընդդիմանալ, Ա. Բազեյանն անկեղծ արձագանքեց. «Այդ դեպքում գնացեք եւ նախագահին ուղիղ ասեք: Նախագահը անձ չէ, նախագահն ինստիտուտ է, պետք է հարգել նախագահի ինստիտուտը»: Ալբերտ Բազեյանի ելույթը, որը ԵԿՄ ներկա վարչության այսօրվա իրադարձությունների քաղաքական գնահատականն էր, զերծ էր զգացմունքային պոռթկումներից, բայց եւ խորքային էր: Հայաստանի բազմաբեւեռ իշխանության համակարգն է, որ հնարավոր դարձրեց հոկտեմբերի 27-ը, բազմաբեւեռ քաղաքական համակարգ, ուր ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարությունները ստանձնել էին պետական եւ քաղաքական գործառույթ՝ իրենցով փոխարինելով պետությունը եւ սահմանդրությամբ ամրագրված իշխանության թեւերը: Բազեյանը միակն էր, որ խոսում էր ոչ թե պարզունակ եւ զգացմունքային հրաժարականի պահանջի մասին, այլ Հայաստանի քաղաքական դաշտի անկատարության մասին փաստարկելով, որ նախագահը չդարձավ համախմբող ուժ, այլ ընդհակառակը ինչ-որ մի ժամանակահատվածից հետո սկսեց գեներացնել դժգոհությունները եւ հակասությունները, իսկ հակասությունները միշտ էլ լուծում են պահանջում:

Այսօր ԵԿՄ-ն կընտրի իր վարչության նախագահին, երեկ միածայն Վազգեն Սարգսյանն ընտրվեց միության հավերժ նախագահ:

ՆԱՐԻՆԵ ՊԵԼԼՈՒՐՅԱՆ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Վազգեն Սարգսյանը «Երկրապահի» հավերժ նախագահ

Հանգուցյալ վարչապետի մայրը ելույթի պահին

Արամ Սարգսյան. «Ես ինձ ազատ մարդ եմ համարում»

Սկիզբը էջ 1

Վարչապետը դեկտեմբերի 8-9-ն աշխատանքային այցով կմեկնի Մոսկվա, որը, նրա պնդմամբ, ճանաչողական բնույթի այց է: Արամ Սարգսյանը մուտք է գործում մեծ քաղաքականություն, եւ նրա հանդիպումը ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի հետ վճռորոշ կլինի Հայաստանի թ՝ տնտեսական, թ՝ ներքաղաքական ու արտաքին քաղաքական զարգացումների տեսանկյունից: Առաջին անգամ դատախտանելով լրագրողների հարցերին, Արամ Սարգսյանը Մոսկվա կատարելիք իր այցի տնտեսական տիրույթում կարեւորեց էներգետիկ համակարգին վերաբերող փաստաթղթերի ու համաձայնագրերի ստորագրումը, ի մասնավորի՝ - ատոմակայանի անվտանգ եւ անխափան գործարկման խնդիրները:

Խորհրդարանի անտարբեր համաձայնությունը տագնապահարույց է

Արամ Սարգսյանը այդպես էլ չի տեղափոխվել կառավարական ամառանոց եւ բնակվում է Արարատում՝ ծնողների հետ: Լրագրողներին նա խոստովանեց, որ դա ընտանեկան խնդիր է, եւ միայն Վազգեն Սարգսյանի մահվան 40-օրյա սգի լրանալուց հետո իրենց ընտանիքը կվճռարկի այդ հարցը. «Դա կախված է իմ ծնողներից, ես միշտ ապրել եմ նրանց հետ, ընտանիքիս հետ»: Կառավարության ծրագրի հաստատման օրը նաեւ «Երկրապահի» համագումարի անդրանիկ օրն էր, եւ երբ Արամ Սարգսյանից հետաքրքրվեցին, թե ինչպե՞ս է կազմված ԵԿՄ-ին, վարչապետը դատախտանեց անկաշկանդ. «Ես «Երկրապահի» հետ կազմված եմ այնքանով, ինչքանով, ԵԿՄ անդամ չեմ, ես ինձ ազատ մարդ եմ համարում: Սիրում եմ «Երկրապահին», բայց կազմված չեմ»:

Վարչապետը քաղաքական իր հենարանների խնդիրն արդեն ճշգրտել էր ելույթում՝ խորհրդարանը, ուր «Միասնություն» դաշինքը մեծամասնություն է, բայց քաղաքական խնդիրներ լուծելու հետ մեկտեղ պետք է մոտալուտ սառնաշունչ ձմռանը ջերմություն տալ Հայաստանի բնակչությանը, ինչպես նաեւ ադամանդագործությամբ, աշխատավարձով եւ թոշակներով, ինչի առաջին քայլը կառավարության գործունեության ծրագրի համաձայն ներկայիս պետական կառավարման համակարգի էական բարեփոխումն է, քանզի «այդ կառավարման համակարգը չի համապատասխանում զարգացման ներկա պահանջներին եւ անարդյունավետ է»:

2000-2002 թթ. Արամ Սարգսյանը խոստանում է ավարտել տնտեսական ու սոցիալական բարեփոխումները՝ ապահովելով կայուն տնտեսական աճ, սակայն թե ինչպիսի՞ հնա աճ ենք մենք ծրագրավորում, դեռեւս հայտնի չէ: Կառավարության ծրագրում միայն նշված է, որ այս տարի նախատեսվում է 5,5 տոկոս տնտեսական աճ, ինչը հեռու է բավարար լինելուց: Հանրապետությունն իր տնտեսական զարգացման ռազմավարությունը կապում է արտաքին ներդրումների հետագա ներգրավման հետ՝ չբերազնահատելով նաեւ ներքին ներդրումների խրախուսումը. «Օտարերկրյա մասնավոր ուղղակի ներդրումների տարեկան ծավալը մինչեւ 2002 թ. պետք է հասցվի առնվազն 350 մլն ԱՄՆ դոլարի, իսկ ներքին ապրանքների հաշվին կատարվող ներդրումները՝ առնվազն 200 մլն ԱՄՆ դոլարի: Ըստ այդմ կառավարությունը լուրջ հույսեր է կապում Զարգացման հայկական գործակալության, ինչպես նաեւ 2000 թ. Համաշխարհային բանկի հետ համատեղ Լոնդոնում գումարվող բիզնես-համաժողովի հետ: Գերխնդիր է արտահանման միտված հայրենական արտադրության խրախուսումը: 2000 թ. պետք է ստեղծվի արտահանման խրախուս[illegible] կայուն, իր աշխատանքը կսկսի 2000 թ. հունվարի 1-ին՝ անտոկոս վարկեր տրամադրելով արտահանող ձեռնարկություններին: Խնդիր է դրված մոտակա 5 տարում կտրուկ բարձրացնել արտահանման ծավալները՝ ՀՆԱ 11,7 տոկոսից մինչեւ 25-30 տոկոս: Ցավոք, արդյունաբերությանը վերաբերող հատվածը ամենաթույլն է. առեւտրի եւ արդյունաբերության նախարարությունը հայոց կառավարության հեղինակային ծախորդ Փանոսն է: Նախարարները գալիս են, գնում, բայց այդպես էլ չի որոշվում Հայաստանի համար հեռանկարային արդյունաբերական ճյուղերի եւ ձեռնարկությունների կոնկրետ ցանկը, եւ արդեն 9-րդ վարչապետի ծրագրում հայտնվում են ծեծված ու քաջածանոթ խոսքեր. «Առաջնահերթ ուշադրություն արդյունաբերության հեռանկարային [illegible] ուղղված, ոչ սուրսպ[illegible] ելնելիք [illegible] եւ էներգաս[illegible] եւ աշխատաս[illegible] ներին եւ ճյուղեր[illegible] ոչ՞նք են այդ ճյուղերը [illegible] հայտնի չէ: Ծրագրի [illegible] արդյունաբերությանը եւ գյուղատնտեսությանը վերաբերող հատվածները հիշեցնում են «այն ի՞նչն է, որ հեռանկարային է» հանելուկի հարցադրումը:

Բավական հստակ է էներգետիկային վերաբերող հատվածը եւ ընդհանրապես արտադրական ենթակառուցվածքների գլուխը, որից վերջապես մեզ համար հայտնի է դառնում արտադրական ենթակառուցվածքներ հասկացության էությունը՝ էներգետիկա, ջրամատակարարում, տրանսպորտ, հեռահաղորդակցություն եւ փոստ: Հասարակական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարությունն այսպիսով կոնկրետ խնդիրներ է առաջադրում, հետեւաբար եւ բարձր է այդ խնդիրների լուծման հավանականությունը: Յուրաքանչյուր կառավարություն ունի հաջողության գրավական, եթե հստակ են ձեւակերպված խնդիրներն ու նպատակները: Կառավարության ծրագրի դրական նորույթներից է կոնցեպցիայի դեմ պայքարի գլուխը, ուր հատկապես շեշտված է հովանավորչության վտանգավորությունը. «Հովանավորչությունը խիստ բնորոշ է հայկական իրականությանը: Կոնցեպցիան բախանցելով պետական կառավարման մեխանիզմ, շատ արագ կկազմալուծի այն՝ վերածվելով ազգային աղետի ու խարխլելով պետականության հիմքերը»: Վարչապետ Արամ Սարգսյանը նպատակադիր է իրեն առաջին կարեւոր քայլ օրենսդրորեն հստակ սահմանել կոնցեպցիայի բնորոշ հետաքրքիր ոլորտները՝ դրամաշնորհություն, փողերի լվացում, բանկային գաղտնարարություն եւ շրջանառություն: Վազգեն Սարգսյանի հակակոնցեպցիոն ռազմավարական ծրագրի մշակումն առջեւում է:

Խորհրդարանը հավանություն տվեց վարչապետի ծրագրին, սակայն խիստ տագնապահարույց է մի հանգամանք, որ ԱԺ-ում չափազանց սակավաթիվ պատգամավորներ ցանկացան խորամուխ լինել ծրագրի բովանդակությանը, շատ պատգամավորների անկեղծ խոստովանությամբ՝ իրենք չեն էլ կարդացել այդ ծրագիրը, իսկ վարչապետին ոչ թե կողմ կոճակներ սեղմող եւ անվստահություն չհայտնող քաղաքական հենարան է պետք, այլ լուրջ վերլուծություն կարող է հավանություն հայտնելուց բացի ծրագրեր առաջադրել:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
Համակարգչային շարվածք «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգի» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Կատիցա Չեկալովիչ. «Գենդերը զարգացնելու համար խորախնամ որոշում պետք է ունենալ»

«Ազգի» նոյեմբերի 30-ի համարում տպագրել էինք «Հավելվածից առաջ Հայաստանում սառեցվում է գենդերային ծրագրի իրագործումը» ծավալուն հրապարակումը, որտեղ մի շարք հարցեր անպատասխան էին մնացել, քանի որ կանխավ չհաջողվեց ստանալ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Կատիցա Չեկալովիչի պատասխանը: Դեկտեմբերի 2-ին տկն Չեկալովիչը ցանկություն հայտնեց պատասխանել հոդվածիս հեղինակի եւ «Երկիր» թերթի թղթակցի հարցերին:

ԱՐԱՐԱՏ

– Տկն Չեկալովիչ, ինչո՞ւ եք սառեցրել գենդերային զարգացման ծրագիրը Հայաստանում:

– Ծրագիրը կարող է ընդարձակվել, կարող է սառեցվել ցանկացած պատճառով: Սա տարօրինակ չէ, մենք աշխատում ենք մարդկանց հետ եւ այդ պատճառով ծրագիրը կարող է ունենալ եւ իր վերելքները, եւ վայրէջքները: Գենդերային հարցում եղել են առաջխաղացումներ, եղել են զարգացումներ, բայց եղել է նաեւ շրջան, երբ պետք է վերանայվեր այդ ստրատեգիան կառավարության հետ: Երբ մենք գենդերի մասին խոսում էինք, շատ հաճախ մարդիկ չէին էլ հասկանում, թե խոսքն ինչի մասին է: Այդ պատճառով մեր գրասենյակում էլ եղավ մի շրջան, երբ հասկացանք, որ մի պահ պետք է կանգ առնենք ու վերաքննենք, թե ո՞րն է լինելու այս ոլորտում կառավարության հետ մեր աշխատանքի ստրատեգիան:

Նման բան այլ ծրագրերի հետ էլ է կատարվել: Լինում է նաեւ, որ վերակառուցում է լինում մեր գրասենյակի ներսում՝ աշխատողների միջեւ աշխատանքի վերաբաժանում կատարելու առումով: Այդ հիմնավորումով է գենդերային ծրագիրը նախորդ պատասխանատուներից փոխանցվել մեկ ուրիշին: Երկար հնարավոր լուծությունից հետո եկանք այն եզրակացության, որ գուցեեւ գենդերը որպես գաղափար չի հասունացել Հայաստանում եւ չի իրականացվել այն, ինչպես մենք ի սկզբանե մտածում էինք: Ծրագիրը ոչ թե փակված է, այլ ժամանակավոր, երկարատեւ դադար է տրված, որպեսզի հասկանանք, թե գենդերը ի՞նչ տեսք ունի մեր համագործակցության մեջ: Գործունեության իմաստով ծրագիրը չի գործում, բայց գենդերն իբրեւ գաղափար օրակարգում է: Երբ տարածաշրջանային խորհրդակցություն է լինում, չենք ասում, թե Հայաստանը չի մասնակցում, որովհետեւ ծրագիրը սառեցված է: Շարունակում ենք տեղեկատվություն ստանալ ու փոխանցել, այդ իմաստով աշխատանքները դադարեցված չեն: Ծրագրի հետ կապված գաղտնի, թաքուն ոչինչ չկա:

– Պատասխանատուները ծրագրի ծախողման հիմնական պատճառը համարում են այդ նպատակով ՄԱԿ-ի հատկացրած 175 հազար դոլար դրամաշնորհի վատնումը, որի հետեւանքով էլ սառեցվել է ծրագիրը:

– Մի քանի միջոցներ կան, որոնցով կարողանում ենք հետեւել ծրագրերի ֆինանսական ընթացքին: Ամեն տարի առնվազն ենք անցկացնում չբացառելով ոչ մի ծրագիր: Մի այլ միջոց ունենք, որ կոչում ենք ռակորդ քվեարկում: Յուրաքանչյուր ծրագիր որոշակի աշխատանքային պլանով է հաստատվում, նախահաշիվներն ուղարկում ենք Նյու Յորք, ծախսերն ստուգում ենք այստեղ, ստուգում են Նյու Յորքում: Բայց եւ այնպես ոչ որ առպահովագրված չէ սխալներից: Ես եմ անձամբ պատասխանատու գլխավոր խորհուրդի առաջ այն ֆոնդերի համար, որոնք ՄԱԿ-ը եւ դոնորները տալիս են Հայաստանին: Եթե որեւէ սխալ կա, կորուստ կա, ոչ ճիշտ ծախսում կա, արդա դա անպայման պահվում է կամ աշխատավարձից, կամ ծրագրի պատասխանատուից:

– Ծրագիրը սառեցնելու որոշման մեջ Դուք նշում եք, որ «Կանայք զարգացման գործընթացում» միավորը պետք է լինի անկախ գրասենյակ՝ չհանդիսանալով որեւէ նախարարության մաս: Վերսկսելուց հետո ինչպիսի՞ կապ կունենան եւ իր վերելքները, եւ վայրէջքները: Գենդերային հարցում եղել են առաջխաղացումներ, եղել են զարգացումներ, բայց եղել է նաեւ շրջան, երբ պետք է վերանայվեր այդ ստրատեգիան կառավարության հետ: Երբ մենք գենդերի մասին խոսում էինք, շատ հաճախ մարդիկ չէին էլ հասկանում, թե խոսքն ինչի մասին է: Այդ պատճառով մեր գրասենյակում էլ եղավ մի շրջան, երբ հասկացանք, որ մի պահ պետք է կանգ առնենք ու վերաքննենք, թե ո՞րն է լինելու այս ոլորտում կառավարության հետ մեր աշխատանքի ստրատեգիան:

Նման բան այլ ծրագրերի հետ էլ է կատարվել: Լինում է նաեւ, որ վերակառուցում է լինում մեր գրասենյակի ներսում՝ աշխատողների միջեւ աշխատանքի վերաբաժանում կատարելու առումով: Այդ հիմնավորումով է գենդերային ծրագիրը նախորդ պատասխանատուներից փոխանցվել մեկ ուրիշին: Երկար հնարավոր լուծությունից հետո եկանք այն եզրակացության, որ գուցեեւ գենդերը որպես գաղափար չի հասունացել Հայաստանում եւ չի իրականացվել այն, ինչպես մենք ի սկզբանե մտածում էինք: Ծրագիրը ոչ թե փակված է, այլ ժամանակավոր, երկարատեւ դադար է տրված, որպեսզի հասկանանք, թե գենդերը ի՞նչ տեսք ունի մեր համագործակցության մեջ: Գործունեության իմաստով ծրագիրը չի գործում, բայց գենդերն իբրեւ գաղափար գոյություն ունի: Ինչպես ասացի,

ազգային

ԿԱՐԾԻՔՆԵՐ

ԵԱՀԿ Ստամբուլյան գագաթաժողովը որակապես տարբերվում է Լիսաբոնյանից

«Մենք ստացանք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների զեկույցը ԼՂ հակամարտության ծավալվող իրավիճակի ու վերջին զարգացումների վերաբերյալ եւ ողջունում ենք նրանց ջանքերը: Մենք, մասնավորապես, հավանություն ենք տալիս Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների երկխոսությանը, որոնց կանոնավոր շփումները հնարավորություններ են ստեղծել ավելի դինամիկ դարձնելու խնդրի տեւական եւ համապարփակ լուծման որոնման գործընթացը: Մենք հաստատակամորեն սատարում ենք այս երկխոսությունը եւ խրախուսում նրա շարունակությունը հուսալով, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում բանակցությունները կվերսկսվեն: Մենք նաեւ հաստատում ենք, որ ԵԱՀԿ-ն եւ նրա Մինսկի խումբը, որը շարունակում է մնալ ամենաընդունելի ֆորմատը լուծումը գտնելու համար, պատրաստ ենք նպաստել խաղաղ գործընթացի հետագա առաջխաղացմանը եւ ապագա կենսագործմանը, ներառյալ կողմերին բոլոր անհրաժեշտ աջակցությունը տրամադրելը»: Սա ԵԱՀԿ Ստամբուլի գագաթաժողովի Հռչակագրի 20-րդ կետն է: ԼՂ խնդրի լուծման առնչությամբ փաստաթղթային արդյունքը գագաթաժողովում: ԼՂ խնդրի առումով ստամբուլյան գագաթաժողովը մեզանում դիտարկվում ու գնահատվում է 1996-ի ԵԱՀԿ Լիսաբոնի գագաթաժողովի համեմատությամբ: Համեմատությունից բահում է Ստամբուլի գագաթաժողովը նշանակելով Հայաստանի միջազգային մեկուսացման վերջ: ԼՂ խնդրի դուրսբերում կարգավորման մեզ համար անշահեկան դաշտից: Հայաստանի վերածում տարածաշրջանի առավել դինամիկ տարրի: Համենայն դեպս, սա է երկրի նախագահի, քաղաքական դաշտի մեծամասնության գնահատականը: Որոշ ուժեր, այնուամենայնիվ, եթե անգամ տարբերություն տեսնում են երկու գագաթաժողովների միջեւ, ապա հօգուտ Լիսաբոնի: Ինչպե՞ս զարգացավ հայ-ադրբեջանական կոնֆլիկտը Լիսաբոնին հաջորդած 3 տարիներին եւ ինչպե՞ս դրսեւորվեց Ստամբուլում: Վերլուծում են Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի փորձագետները:

ՄԿՐՏԻՉ ՉԱՐԴԱՐՅԱՆ, ՌԱՀՀԿ փորձագետ, «Հանրային քաղաքականություն» ծրագրի ղեկավար

Ստամբուլում ոչ մի երկիր հակված չէր լուրջ փաստաթուղթ ստորագրելու

Թեպետ ԵԱՀԿ Լիսաբոնի եւ Ստամբուլի գագաթաժողովների կարգավիճակը դե յուրե նույնն էր, դե ֆակտո սրանք բավական տարբեր էին: Տարբեր էր ԵԱՀԿ պետությունների քաղաքական պատկերը: 1996-ին Ռուսաստանը դեռեւս շարունակում էր իր նահանջողական քաղաքականությունը: Եվ լիսաբոնյան հանդիպումն առավել հանդարտ մթնոլորտում էր ընթանում առանց Ռուսաստան-ԱՄՆ հակամարտության: Սա էլ փաստորեն գագաթաժողովի ուշադրությունը սրեց դեպի լոկալ խնդիրները՝ այդ թվում ղարաբաղյան: Չնայած ռազմական հաղթանակին Հայաստանը դիվանագիտական պարտություն կրեց:

Ստամբուլի գագաթաժողովն արդեն ընթանում էր Ռուսաստան-ԱՄՆ հակամարտությամբ: Կոսովոյի խնդրի ուրվականը, Չեչնիայի խնդիրն ուշադրության կենտրոնից հեռացնում էին ԼՂ հարցը: Բացի այդ, հիմքեր կան ենթադրելու, որ Ստամբուլում ոչ Հայաստանը, ոչ Ադրբեջանն ի սկզբանե մտադրված չէին լուրջ փաստաթուղթ ստորագրելու: Կարծում եմ «եվրոդաշ» եւս իր վերապահումներն ուներ ստամբուլյան հանդիպման վերաբերյալ՝ ինչպես տվյալ, այնպես էլ բուն եվրոդաշնական խնդիրների համատեքստում: Դիվանագիտական հարթությունում իրենց դերը խաղացին նաեւ մի կողմից ադրբեջանական ընդդիմության, մյուս կողմից հոկտեմբերի 27-ի հայաստանյան իրադարձությունների գործոնները: Բայց, անգամ սրանց բացակայությամբ, հայ-ադրբեջանական որոշակի որեւէ փաստաթղթի ստորագրումը Ստամբուլում իրատեսական չէր: Լիսաբոնի համեմատությամբ թերեւս ստամբուլյան հանդիպումը Հայաստանի համար կարելի է բնորոշել որպես դիվանագիտական հաջողություն, համենայն դեպս առաջընթաց: Եվ նրա արդյունքում, ինչպես երեւում էր Ռ. Քոչարյանի ելույթից, կբարձրանա Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների շփումների արժեքը, իսկ Մինսկի խումբն ու համանախագահներն առավել պատրոնաժային դերում կլինեն այսուհետ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՌԱՀՀԿ կովկասյան տարածաշրջանի գծով փորձագետ

Ռ. Քոչարյանի արտաքին քաղաքականությունը՝ հարձակողական

Կարծում եմ, որ Երեւանի համար Ստամբուլի գագաթաժողովի հիմնական դրական արդյունքն այն է, որ եվրոդաշնական ֆորումն անուղղակի ֆիքսեց Հայաստանի նկատմամբ վարվող միջազգային մեկուսացման քաղաքականության պարտությունը, որ հետեւողականորեն իրականացնում էր Ադրբեջանը վերջին երեք տարիներին: Այս փաստն, ըստ իս, պիտի համարել հայ դիվանագիտության հաջողություն: Ինչի՞ հաշվին ստացվեց դա:

Հաճախ դրսից երեւույթներն առավել լավ են երեւում, քան ներսից: Այսպես, Բաքվի վերլուծաբանները համակարծիք են եւ գտնում են, որ Ստամբուլում ադրբեջանական դիվանագիտության փաստացի պարտությունը բացատրվում է նրանով, որ Հայաստանը Լիսաբոնից ի վեր էական քայլ է արել իր երկրում իրական դեմոկրատական պետություն կառուցելու ուղղությամբ: Սա այն դեպքում, երբ Ադրբեջանն իրեն լիովին վաճառեց նույն այդ Արեւմուտքին, մինչդեռ Հայաստանն ունի քաղաքական առեւտրի հնարավորություն:

Ամփոփելով ադրբեջանցի իմ գործընկերների կարծիքները կարելի է ասել, որ հետլիսաբոնյան շրջանում Հայաստանը վարել է առավել ակտիվ ներքին ու արտաքին քաղաքականություն, քան Ադրբեջանը: Սա թե ինչու: Լեւոն Տեր-Պետրոսյանը Լիսաբոն մեկնեց կիսալեգիտիմ կարգավիճակում թիկունքում ունենալով 1996-ի սկանդալային նախագահական ընտրությունները: Հ. Ալիեւն, ընդհակառակը, Պորտուգալիայի մայրաքաղաքում իրեն ավելի քան վստահ էր զգում, քանզի այդ ժամանակ վայելում էր իր ժողովրդի համաստատ աջակցությունը: Ստամբուլում դերերը հակառակ էին: Հ. Ալիեւը ժամանեց գագաթաժողովին 1998-ի միջազգային չափանիշներին չհամապատասխանող նախագահական ընտրությունների բերով: Իսկ Ռ. Քոչարյանը եւեւում ուներ ընդհանուր առմամբ դրական գնահատականի արժանացած նախագահական, խորհրդարանական, մունիցիպալ ընտրություններ Հայաստանում: Սա ներքին քաղաքականության առումով: Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա ԵԱՀԿ Բուդապեշտի գագաթաժողովից հետո (1994 թ.) տերպետրոսյանական թիմի գործունեությունն առավել պաշտպանողական, պասիվ էր, իսկ Հ. Ալիեւինը՝ հարձակողական: Լիսաբոնից հետո իրավիճակն արմատապես փոխվեց: Այն ժամանակ, երբ Հ. Ալիեւը պասիվ դիրքում սպասում էր միջազգային հանրության գործողություններին, որոնք կստիպեին Հայաստանին լուծել ղարաբաղյան հարցը Լիսաբոնի գագաթաժողովի սկզբունքների հիման վրա, Ռ. Քոչարյանը, պաշտոնական Երեւանի արտաքին քաղաքական կուրսում գործադրելով փոխլրացման սկզբունքը, անցավ խաղաղ դիվանագիտական հարձակման: Նման դիվանագիտության հիմնական նպատակը միջազգային հանրությանը համոզելն էր Հայաստանի եւ Թուրքիայի, ինչպես նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ նախնական տնտեսական համագործակցության անհրաժեշտությունը հակամարտության դեռ չկարգավորված վիճակում, ինչն անհրաժեշտ պայման կլինի այնուհետեւ փոխընդունելի զիջումներով հակամարտության համապարփակ լուծման գործում:

Միաժամանակ հետլիսաբոնյան Հայաստանը հանդես եկավ Հարավային Կովկասում երկարաձգ խաղաղության պահպանության համար տարածաշրջանում միասնական անվտանգության համակարգ ստեղծելու շաս կարեւոր առաջարկով, ինչը նաեւ Արեւմուտքի շահերից է բխում կազմված այստեղ իրականացվելիք նավթային, տրանսպորտային եւ այլ տնտեսական ծրագրերի հետ: Այս համատեքստում Հայաստանի մեկուսացման Ադրբեջանի քաղաքականությունը սկսեց հակասել նաեւ Արեւմուտքի շահերին: Այստեղից էլ ստամբուլյան գագաթաժողովի արդյունքները, որոնք, անտարակույս, կամրագրվեն որպես հայ դիվանագիտության ձեռքբերում:

ՄԿՐՏԻՉ ՉԱՐԴԱՐՅԱՆ

Առաջարկ անում է ուժեղը

Դեռեւս տարիներ առաջ ԼՂ հակամարտության լուծման փոխընդունման կամուրջներ կոչվող տարբերակն առաջարկեց Ռուսաստանը, որ կասպյան նավթի խնդիր էր կամենում լուծել: Առաջարկի էությունը հետեւյալն էր. հակամարտող կողմերին պետք է վերանայ հակամարտության փաստից, սկսել տնտեսական համագործակցություն եւ ապա միայն առողջացող մթնոլորտում վերադառնալ խնդրի լուծմանը: Նմանատիպ առաջարկով ավելի ուշ հանդես եկան Եվրոդաշի պետությունները եւս. այն է՝ Տրաստեկա, Ինոգեյթ ծրագրերի միջոցով հարթել տարածաշրջանի կոնֆլիկտները: Ռուսաստանի վերոհիշյալ ծրագիրը մնաց առկախ, իսկ եվրոդաշնական ծրագիրն էլ, թեպետ ակտիվ ընթարկվում է, բայց միայն նավթային խնդիրների շրջանակում:

Փաստորեն, այս տարբերակների հեղինակները դրսից էին մինչ այժմ: Իսկ Ստամբուլում այդպիսի առաջարկով հանդես եկավ Հայաստանն ինքը:

Ըստ էության պարզ է Լիսաբոնի եւ Ստամբուլի ԵԱՀԿ գագաթաժողովների տարբերությունը դարաբաղյան հակամարտության կտրվածքով. երբ Հայաստանն ունի գործընթացն իր բաժնով կառավարելու հստակ ելակետ ի տարբերություն լիսաբոնյան փակուղու:

ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՏԱԳԱՂԹ

Կռունկ, ո՞ւր երթամ, դրսի աշխարհեն խաբրիկ մը չունի՞ս

Թվացյալ էր, թե բառարաններում ննջող «պանդուխտ», «պանդխտություն» բառերը վաղուց կորցրել են իրենց գործածության նախկին նշանակությունը, երբ մարդը երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական ծանր վիճակից՝ հաց-հանապազօրյայի տենդից ճարահատ բռնում է օտարության անորոշ, անհայտ ուղին:

Ամբողջատիրության փլուզումից հետո անկախության ճանապարհը բռնած մեր երկիրն անցավ փորձությունների մի նոր, ծանր շրջան, որն իր հազարամյա պատմության հերթական մի ժամանակահատվածն է, անշուշտ: Փորձություններին ու դժվարություններին դիմակայելն էլ ժամանակի մի ընթացք է՝ նախատահմանված, տրված մարդուն, մարդկությանն ընդհանրապես: Սակայն ամենադժվարին պայմաններում անգամ անհրաժեշտ է պահպանել դարերի ընթացքում ձեռք բերված ազգային կարեւորագույն արժեքները:

Օտարացումը սեփական երկրում սողոսկում է մարդկանց մեջ, առանձին հոգսերից, օրվա աղրուսը հայթայթելու քաշքռտկից հոգնածների քանակն օրըստօրե ավելանում է՝ հուսահատության մատնելով սոցիալական ամենատարբեր խավերի սվար զանգվածներին: Շատ ավելի հաճախ իրենց կամից ու ցանկությունից դուրս, պարտադրված, տաղտկալի ու մղձավանջային դարձած առեւտրով զբաղվողները, պարապությունից օրերը սպանող բազմահազար մարդիկ հույս են փայփայում, թե ժամանակները դեռ կփոխվեն եւ իրենք կվերադառնան իրենց մասնագիտական աշխատանքներին: Մտավոր եւ ֆիզիկական ներուժը չօգտագործելուց շատերը հասել են հոգեւոր եւ ֆիզիկական բարոյալքման: Աշխատանքից մարդուն զրկելը իրոք մեղք է, հանցանք:

Սոցիալապես ծանր վիճակում հայտնվածների բանակը սվարանում է, տարիներով աշխատանք փնտրողների, ամիսներով աշխատավարձերի ու թոշակների խղճուկ գումարին սպասողների համբերությունը հատնում է. հասարակության ներսում լարվածությունը սաստկանում է: Շատերի համար կյանքը դառնում է ուժերից վեր բարձրացվող ծանրություն: Նման պայմաններում փոխվում են հասարակության բարոյական չափանիշները, մարդկանց մտածողությունը, ըմբռնումները՝ ազդելով, անշուշտ, նրանց փոխհարաբերությունների վրա: Բարոյալքվում ու քայքայվում են ընտանիքներ, շատերն են հեռանում երկրից՝ օտար ափերում բախտ որոնելու: Ցավալի մի խնդիր, որ կարծես սովորական եւ տարածված մտայնություն է դարձել մեզանում: Արտագաղթն այսօր հսկայական չափերի է հասնում: Անորոշությունն ու անհուսությունը մարդկանց հանգեցրել է այն մտքին, որ հեռանալը փրկություն է:

Օդանավակայանի տահերը լեփ-լեցուն են. մարդիկ լքում են իրենց տները՝ հեռանալով ամենատարբեր ուղղություններով, շատերն՝ անտեղյակ ու անհրազեկ իրենց ապագա բնակատեղին, իրենց անելիքին: Դեսպանատների առաջ մարդկանց շարքերն ավելի են սվարանում: Ո՞ւր են տանում ինքնալքումի, փախուստի այս տրամադրությունները, որ համակել են մեր հայրենակիցներից շատերին՝ անկախ տարիքից, մասնագիտությունից: «Պատրաստ եմ ամեն կարգի լավ վարձատրվող աշխատանքի, միայն թե կարողանամ համապատասխան գումար հայթայթել՝ այստեղից գնալու համար», «Որեւէ հեռանկար, ապագա չեմ տեսնում այս երկրում, ընդունակությունների դրսեւորման ասպարեզ չկա, հնարավորությունները սահմանափակ են: Դրսում այդ ամենը ավելի հեշտ է», «Լավ է օտարի մոտ աշխատեմ, քան այստեղ: Ուրիշ տեղ քեզ չեն խաբի, ստորացած չես զգա», «Ավարտելուց հետո ի՞նչ պիտի անենք, որտե՞ղ աշխատենք, սովորելն իր իմաստը կորցնում է: Առեւտուր անելու համար համալսարանական կրթություն պետք չէ»: Պատճառաբանությունները բազում են. ապրելը դժվար է, ապագան՝ անորոշ: Հասարակության նման զանգվածային տրամադրությունները տագնապահարույց են, վտանգավոր, նաեւ վարակիչ՝ հատկապես պատանիների, երիտասարդության համար: Անել վիճակում հայտնվածների համար հեռանալը դառնում է մտասեւեռվածություն եւ ելք՝ փակուղային վիճակից: Քիչ չեն եւ այնպիսիք, ովքեր վախենում են, թե իրենց վաղեմի կարծր գաղափարները՝ ազգայինի, հայրենիքի, հողի, լեզվի ու հավատի իրենց ունեցած ըմբռնումները, բարոյական արժեքների պատկերացումները, որոնցով ապրել են մի ողջ կյանք, կարող են տեղի տալ համընդհանուր անտարբերության, անհույս օտարածության «հեղեղի» առաջ: Ընդամենը մի քանի տարի առաջ իրենց կյանքը կամավոր այս հողի համար դրած տղաներից շատերն անգամ սկսել են երկբայել, տարակուսել: Որտե՞ղ որոնել խարիսխ, ո՞րն է ելքը: «Երկնքից կրակե անձրեւ տեղալու դեպքում էլ չեմ լքի հայրենիքը» մտածողների քանակը ցավալիորեն նվազում է: Օտարացումը լլկում է մեզ:

Հասարակության մեջ աննրելի անտարբերություն է իշխում արտագաղթի, սոցիալական այս աղետի նկատմամբ, երկիրը դատարկվում է իր գլխավոր հարստությունից, մարդը լքում է իր հողը՝ կառուցելու, արարելու, շենացնելու փոխարեն: Իշխանությունները լռում են: Երեւույթը մերժելու, ժխտելու հասարակական ընդհանուր մթնոլորտ առաջվա նման չկա, հայրենասիրության, բարոյախոսության չափանիշները փոխվել են եւ ազդեցությունը կորցրել են այլեւս: Նման պայմաններում իրատեսական ծրագիր եւ որոշակի քայլեր են հարկավոր: Արդելու համար բնականոն պայմաններ են անհրաժեշտ: Մարդկանց պետք է տալ աշխատելու, ստեղծագործելու հնարավորություն, ստեղծել բավարար քանակով աշխատատեղեր՝ եռանդուն օիքմ հաղորդելով կյանքին, առողջացնելով հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը:

ՄԵԼԻՆԵ ԲԱԳԱՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ԱՄՓՈՓԱԾ

Կիրակի Ուզբեկստանում խորհրդարանական ընտրություններ են

Հայ համայնքն ապրում է իր հոգսերով եւ գոհ է նախագահ Քարիմովից

Դեկտեմբերի 5-ին Ուզբեկստանում տեղի կունենան խորհրդարանական ընտրություններ, որոնց կմասնակցեն հանրաքեսությունում գրանցված հինգ՝ Արդարություն, Հայրենիքի առաջադիմություն, Ազգային վերածնունդ, Ժողովրդա-դեմոկրատական եւ Ֆիդոկոոպեր (անձնագրերի) կուսակցությունները՝ պայքարելով Օլի մեժլիսի 250 տեղերի համար: ԵԱՀԿ-ի Տաշքենդի ներկայացուցչությունն արդեն իսկ հայտարարել է, որ հրաժարվում է ԿԸՀ-ի միջոցառումներին մասնակցելուց եւ իր դիտորդներին չի գործուղի ընտրական տեղամասեր: ԵԱՀԿ դիտորդական խմբի ղեկավար Մայքլ Վիկենսն այն կարծիքին է, թե պետական իշխանությունները միջամտում են ընտրությունների ընթացքին եւ ընտրական օրենսգիրքն էլ շատ հեռու է ԵԱՀԿ անդամ երկրների հանձնառություններից: Մինչդեռ ԿԸՀ-ի նախագահի կարծիքով, իրոք, որոշ դեպքեր արձանագրվել են, երբ ճնշումների ազդեցության տակ գրանցված 1242 թեկնածուներից 21-ը հանել են իրենց թեկնածությունները, ինչի դեմ պայքարում է նաեւ ԿԸՀ-ն: Ինչ վերաբերում է օրենսդրությանը, ապա այն չի կարող 100 տոկոսով համապատասխանել ԵԱՀԿ-ի ընդունած փաստաթղթերին, հանգի արտացոլում է ուզբեկ ժողովրդի սկզբունքներն ու էությունը: Չնայած այս ամենին, 47 միջազգային դիտորդներ այնուամենայնիվ կմասնակցեն ընտրություններին: Իսկ ամենահետաքրքիրն այն է, որ վերոհիշյալ հինգ կուսակցություններից եւ ոչ մեկն ընդդիմադիր չէ: Այնպես որ, թե ով կհաղթի՝ նախագահ Քարիմովի համար այնքան էլ մեծ նշանակություն չունի, թեեւ ողջ գործադիր եւ օրենսդիր հանգակարգն այս օրերին ծանրաբեռնված է միայն ընտրություններով:

Քարիմովն ինքն է սկսել իր ընտրարավը, հանգի 2000 թվականի հունվարի 9-ին տպավորիչ նախագահական ընտրություններում նա, որքան էլ զարմանալի է, մրցակից ունի՝ Աբդուլհաֆիզ Տալալովը, որը փիլիսոփայության եւ իրավունքի ինստիտուտի տնօրենն է եւ ժողովրդա-դեմոկրատական կուսակցության առաջին քարտուղարը: Մեկնաբանները չեն էլ կասկածում, որ նախագահ Իսլամ Քարիմովի հաղթանակն առապահովված է:

Իսկ հասարակ մարդիկ ապրում են իրենց հոգսերով՝ ամենեւին ուշադրություն չդարձնելով քաղաքականացված ընտրարշավին: Հայ համայնքը, որի ներկայացուցիչների հետ հանդիպեցի շաբաթներ առաջ, նույնպես իր հոգսերն ունի, բայց գոհ է երկրի ղեկավարությունից:

Տաշքենդյան հանդիպումներ. հայ համայնք

Տաշքենդի հայկական մշակութային կենտրոնի տնօրեն, նկարիչ Իգոր Թումասովին հանդիպեցի Ուզբեկստանի մայրաքաղաքում գործող եւ հայերին պատկանող մոտ 25 ուծաբաններից մեկում: Իգորը ծնվել է Բաքվում, 1983-ին տեղափոխվել Տաշքենդ եւ այստեղ ավարտել գեղարվեստի ինստիտուտը:

1988 թ. նախաձեռնող խումբ ստեղծվեց, որի հիմնական անելիքը Լեռնային Ղարաբաղի աջակցության ստորագրություններ հավաքելն է: 1989-ին կազմակերպել են հայկական մշակութային կենտրոն, որի առաջին նախագահն էր Արկադի Գրիգորյանցը՝ պատմաբան, «Հայերը Միջին Ասիայում» գրքի հեղինակը: 1993-98 թթ. կենտրոնի նախագահն էր Վալերի Սարկիսովը, որը Տաշքենդի նախկին քաղաքապետն էր եւ գլխավոր շինարարական կազմակերպության ղեկավարը: Նրանից հետո կենտրոնի նախագահությունը ստանձնեց Իգոր Թումասովը:

1993 թ.-ից համայնքում սկսել է գործել հայկական դպրոց, որ հաճախել է 70 աշակերտ:

1994 թվականից համայնքին մեծ աջակցություն էր ցույց տալիս Ուզբեկստանի այն ժամանակվա հեղինակություններից մեկը՝ Վալերի Բագրայանը, որը ֆինանսավորում էր Տաշքենդի հայկական կիրակնօրյա դպրոցը, ուսուցիչների աշխատավարձն ու հայ միայնակ տարեցների թոշակն էր տալիս: Նա նաեւ մեծ օգնություն էր ցույց տալիս Տաշքենդի հիվանդ երեխաների միակ մանկատանը: Յավոք, 1996 թվականին նրան սպանեցին, եւ կենտրոնի աշխատանքները կանգ առան: Միայն 1998 թ., երբ Իգոր Թումասովը ղեկավարեց կենտրոնը, նրա անձնական միջոցներով կրկին աշխատեց դպրոցը, ուր այժմ հաճախում է մոտ 180 աշակերտ: Թերթ չի հրատարակվում, որովհետեւ, ըստ կենտրոնի նախագահի, դա շատ ծախսատար հաճույք է: Փոխարենն, ամիսը երկու կամ երեք անգամ հեռուստատեսությամբ հեռարձակվում է կեսժամանոց «Նոյյան տապան» մշակութային հաղորդումը, որն ավելի մեծ լսարան ունի: Մարտ ամսից հաղ գործարարներից մեկը, ով ֆինանսավորում է դպրոցը, խոստացել է, որ լավ արդյունքների դեպքում կաշխատի նաեւ եկեղեցի կառուցելու ուղղությամբ: Առայժմ հայկական եկեղեցի կա միայն Սամարղանդում, որը կառուցել է նախկինում տեղաբնակ, այժմ փարիզաբնակ գործարար Արթուր Մարտիրոսյանը, ինչի համար էլ նա արժանացել է Գրիգոր Լուսավորիչ շքանշանի: Ի դեպ, լինելով Սամարղանդում, այցելեցի հայկական եկեղեցի, բայց հոգեւոր հովիվը տեղում չէր: Մի եռարիտասարդ էր ճնած եկեղեցու մեջ, հարցրեցի՝ որտեղի՞ց ես, ասաց. «Մեղրիից»: Եվ այլեւս ոչ մի հարցի չկարողացավ պատասխանել:

Այժմ Ուզբեկստանում, պատշոնական տվյալներով, բնակվում է 40 հազար հայ, որից 30 հազարը՝ Տաշքենդում: Հայերն Ուզբեկստանում հաստատվել են դեռ Թեմուրի ժամանակներից, երբ մեծ թվով վարպետներ, շինարարներ ու վաճառականներ են բերվել Սամարղանդ եւ Բուխարա, պատմում է Իգոր Թումասովը: Այնուհետեւ ավելի ուշ՝ 1800-ականը: Այնուհետեւ ավելի ուշ՝ 1800-ականը: Այնուհետեւ ավելի ուշ՝ 1800-ականը: Ներկայումս Ուզբեկստանում ապրող բոլոր ազգերի ներկայացուցիչներն իրենց ազատ զգան եւ յուրահանչյուրն Ուզբեկստանը համարի իր տունը: Ազգամիջյան հարցերում նախագահի վերաբերմունքը շատ խիստ է եւ որեւէ խտրականություն օրենքով խստորեն դատապարտվում է:

Ինչ զգացումներով են ապրում տեղի հայերը: Իգոր Թումասովի ասելով, իրենց հայրենիքը Հայաստանն է ու Ղարաբաղը: Ուզբեկստանին ջերմորեն են վերաբերվում, եւ նույնպես իրենց տունն են համարում եւ հայրենիք: Հայերը երբեք ադրբեջանցիների հետ հարաբերությունները չեն տարածել ուզբեկների վրա: «Ուզբեկները մեզ տուն ու տեղ են տվել, ջերմությամբ ընդունել: Տեղի հայերը պետք է յուրօրինակ կամուրջ հանդիսանան Հայաստանի ու Ուզբեկստանի հարաբերություններում: Դրա համար կա եւ Հայաստանի գիտական պոտենցիալը, եւ Ուզբեկստանի հումային բազան: Կարող են ստեղծվել համատեղ ձեռնարկություններ: Եվ այն, որ գոյություն ունի ՎՈՒԱՄ-ը, դա չպետք է խանգարի հայ-ուզբեկական հարաբերությունների զարգացմանը», ասում է Թումասովը: Հայկական համայնքի միակ հավաքատեղին հայկական դպրոցն է (ավելի ճիշտ՝ այն մի քանի դասարանը, որ հատկացվում է հայերին սովորական միջնակարգ դպրոցում): Դպրոցի տնօրեն Էվիրա Բաղդասարովայի ասելով՝ Տաշքենդում շատ բան կորցված է: 15-16 տարեկան երեխաներն այլեւս հայերեն չգիտեն, հետու են հայկական ավանդույթներից: Շատերն են առաջնորդվում «հայոց լեզուն ինչներիս է պետք!» մտայնությամբ: Երեխաներին ինչ մեղադրես, եթե մեծերն էլ հիմնականում ռուսերեն են խոսում: Հայ համայնքը լիովին ռուսացել է, իսկ հայերենը մնացել է որպես շրջապատում գաղտնի խոսակցություն վարելու լեզու: Գորիսից մի քանի տարի առաջ Տաշքենդ տեղափոխված տկն Ավագյանը հայոց լեզու է դասավանդում, գոհ է տղաներից: Բայց մի դիտողություն չկարողացավ չանել. «Հայեր կան, որ ռեստորաններում ամեն օր հարյուրավոր դոլարներ են շաքաք տալիս, իսկ հայկական դպրոցին օժանդակելու համար 100 դոլար էլ չեն տա»: Գեորգի Սահակովի ասելով՝ երեխաների ծգտումը ծնողներից ու ընտանիքից է կախված: Ինքը ոչ մի տատ հայերեն չի իմացել, բայց ինքնուս հայերեն է սովորել ու նույնիսկ դպրոցում դասավանդել: Բացի հայերենից, երեխաները սովորում են նաեւ հայ ժողովրդի պատմություն, ազգային երգեր ու պարեր, նկարչություն ու անգլերեն: Եթե միջոցներ ունենային, մեծ սիրով նաեւ Հայաստան կմեկնեին՝ հանգստանալու կամ ուսումը շարունակելու: Հայերը, ինչպես ուզբեկները, շատ են հոգատարությամբ բոնցիամարի ափարհի բազմակի չեմպիոն Արթուր Գրիգորյանով, որ ծնվել է Ուզբեկստանում, առաջին անգամ ուզբեկական դրոշն ափարհում վեր բարձրացրել եւ դարձել է բոլորի սիրելին: Նա այժմ բնակվում է Համբուրգում, բայց երբեմն այցելում է նաեւ Տաշքենդ: Երեւի կարոտում է իր հայ ընկերներին, որոնք ոչ միայն հիանալի պատվել գիտեն հյուրին, այլեւ չեն մոռացել հայկական ավանդույթներն ու սովորույթները:

ՀԱՅԿԱՆ ԱՍՏԻՊԱՆ
Տաշքենդ-Գրահա

ՄԱՐՍԵԼ

Շիրակը հային համբերություն է սովորեցնում

Մարսելի 2600-ամյակի տոնակատարության առթիվ նոյեմբերի 12-ին այդ քաղաք էր ժամանել Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժակ Շիրակը: ՀԲԸՄ փարիզյան տեղեկագիրը հաղորդում է, որ նույն օրը Մարսելի քաղաքապետ, Սենատի փոխնախագահ Ժան-Կլոդ Գոդենը քաղաքապետարանում կազմակերպել էր հանդիպում երջանային պատգամավորների հետ: Հանդիպման ժամանակ 1915 թ. ապրիլի 24-ի հանձնախմբի անդամ դոկտոր Պիեռ Մաշոյանը Ֆրանսահայ համայնքի անունից նախագահ Շիրակին խնդրեց այնպես անել, որ Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ Ազգային ժողովի 1998 թ. մայիսի 29-ի օրինագիծն ի վերջո հաստատվի Սենատում: Իր հիացմունքն արտահայտելով Հայաստանի եւ նրա նախագահ Ռոբերտ Քոչարյանի հանդեպ, ժակ Շիրակը միաժամանակ նշեց, թե «հակամարտությունը կկարգավորվի լոկ Կովկասում խաղաղության հաստատման դեպքում»: Շիրակն ավելացրեց, թե ինքն ուշի-ուշով հետեւում է նախագահներ Քոչարյանի եւ Ալիեւի ջանքերին եւ ակնկալում, որ մինչեւ տարեվերջ շոշափելի արդյունքներ կարձանագրվեն ղարաբաղյան կարգավորման հարցում: «Հարկավոր է մի քիչ համբերել», հայտարարեց Ֆրանսիայի նախագահը:

Պիեռ Մաշոյանը Շիրակին հիշեցրեց, որ հայերը գիտեն համբերատար լինել, եւ կրկնեց Սենատում օրինագծի ստորագրմանն առնչվող իր հարցը: Ի պատասխան Շիրակը վերստին համբերության կոչ արեց, ասելով, թե «Հայաստանի, Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության հաստատման դեպքում դեպքերը շատ ավելի արագ կզարգանան»:

Իրենց ամբողջ պատմության ընթացքում հայերը բազմիցս ապացուցել են, որ անչափ մեծ համբերություն ունեն: Մինչդեռ Ֆրանսիան, ԱՄՆ-ի օրինակով, անհամբերության նշաններ է ցույց տալիս եւ Հայաստանի վրա ճնշում է գործադրում Ղարաբաղի հակամարտությունն ամեն գնով կարգավորելու նպատակով, իսկ դա կարող է կրկին ապակայունացնել տարածաշրջանը: ժակ Շիրակի խոսքերից հետեւում է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման շուրջը բանավեճ կարող է ծավալվել միայն խաղաղության համաձայնագրի կնքման դեպքում: Հայերը բնավ դեմ չեն տեւական խաղաղության հաստատմանը, բայց չի կարելի համաձայնագիր ստորագրել ամեն գնով:

Պ. Ք.

ՓՐՈՎԻԴԵՆՍ

Սթրոբ Թալբոթը քննադատում է Ռուսաստանի քաղաքականությունը Հյուսիսային Կովկասում

ՓՐՈՎԻԴԵՆՍ, 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆՍՐՔ: Հյուսիսային Կովկասում ներկայումս ընթացող պատերազմն սկսել են Չեչնիայում բազավորված գրոհայինները, սակայն Ռուսաստանը փորձում է այն դադարեցնել այնպիսի եղանակներով, որոնք ոչ թե հեշտացրել, այլ ավելի են դժվարացրել չեչեն ժողովրդի լոյալության ապահովումը եւ հանգեցրել են մնացյալ աշխարհի հետ Մոսկվայի հարաբերությունների լարվածության աճի: Այսպիսի հայտարարությամբ հանդես է եկել ԱՄՆ պետքարտուղարի առաջին տեղակալ Սթրոբ Թալբոթը: Նա հինգշաբթի օրը դասախոսություն է կարդացել Փրովիդենսի Բրաունի համալսարանում (Ռոդ Այլենդի նահանգ), որտեղ անդրադարձել է ազգային ինքնորոշման խնդրին ժամանակակից միջազգային քաղաքական գործընթացի պայմաններում: Ամերիկյան դիվանագետի կարծիքով, ներկայումս արդեն «ներքին գործ» չէ այն, թե ինչպես է կառավարությունը վարվում իր ժողովրդի հետ. դա միջազգային հանրության գործն է, քանի որ, Թալբոթի կարծիքով, վտանգված են «համընդհանուր արժեքներ եւ տարածաշրջանային անվտանգությունը»:

Ստամբուլի գագաթնաժողովում ԵԱՀԿ առաջնորդների հավանությանն արժանացած նման դիրքորոշումը հնարավորություն է ընձեռում պատշաճանելու ինքնորոշումը՝ առանց անջատականությանն աջակցելու, ասել է ԱՄՆ պետքարտուղարի առաջին տեղակալը: Նա ընդսմին նշել է, որ այնպիսի բազմաէթնիկ եւ աշխարհագրական առումով տարածական պետություններ համար, ինչպիսիք են Ինդոնեզիան եւ Ռուսաստանը, «անջատականությունից պատշաճվելու լավագույն միջոցը կլինի փոխադարձություններ եւ հեռավոր համայնքների իրավունքների պատշաճությունը»:

ԵԱՀԿ-ն հավանություն է տվել այն սկզբունքին, որ «մի կողմից, միջազգային սահմանները չպետք է փոխվեն ուժի միջոցով ոչ ագրեսիայի, ոչ անջատական պատերազմի հետեւանքով, սակայն, մյուս կողմից, կառավարությունները պատասխանատվություն են կրում ոչ միայն պետության տարածքային ամբողջականությունը պատշաճելու, այլեւ այն բանը երաշխավորելու համար, որ պետության տարածքում ապրող բոլոր անձինք իրենց զգան որպես պետության հարգարժան քաղաքացի եւ օգտվեն իրենց օրինական իրավունքներից», ասել է Սթրոբ Թալբոթը:

«ՀԵԼԻՈՍ 1Բ»

Ադագայի լրտես արբանյակն արձակվեց

Հեռախուզական արբանյակներից ստացվող լուսանկարներն այսօր կենսական անհրաժեշտություն են դարձել զինված ուժերի համար: Տիեզերական հետախուզությունն անցյալում մատչելի էր միայն գերտերություններին: Իսկ 1995 թ. հուլիսից հետախուզական ընդհանուր արբանյակ ունեն նաեւ Ֆրանսիան, Իտալիան եւ Իսպանիան: Մինչեւ օրս այդ երկրների գլխավոր օտաքները հազարավոր լուսանկարներ են ստացել, որոնք 700 կմ բարձրությունից կատարել է «Հելիոս 1Ա» լրտես արբանյակը 1 մետրի ճշգրտությամբ: Այժմ արձակումից 4 տարի անց, արբանյակը շարունակում է գործել, բայց դրա աշխատանքի ժամկետը շուտով կավարտվի: Ուստի դեկտեմբերի 3-ին Ֆրանսիական Գվիանայի Կուրու հրվանդանից արձակվեց «Հելիոս 1Բ» լրտես արբանյակը: Ընդամենը երկու սուկես տոննանոց արբանյակն ամերիկյան «Իկոնոս» արբանյակից թեթեւ է, բայց վերջինիս գերազանցում է տիեզերական պատկերների ընտրության ու հաղորդման առումով: Լրտես արբանյակի աշխատանքում թերեւս միակ խոչընդոտն ամպամածությունն է:

«ԼՄՊՈ»

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Օպերային թատրոնը իրագործումների շեմին

Հայաստանի «ամենացավոտ» երաժշտական կետը՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնը, ներկայումս գեղարվեստական եւ բարոյահոգեբանական վերակառուցման բարդ ժամանակներ է ապրում: Եթե արդարացի համարենք Ռոնսարի, ապա նաեւ Շեխսպիրի «Աշխարհը թատրոն է» հայտնի ասույթը, ապա բնական կլինի նաեւ ասել, որ «թատրոնը կյանք է»:

Իրոք, առանց կյանքի՝ մշակական ընչառական ռիթմի, շարժման ու զարգացման դժվար է դատկերացնել ծավալուն թատերական կոլեկտիվ: Բայց մեր օպերային թատրոնը վերջին տարիներին դարարեր էր տիպ ինքնազարգացման հոսանքի: Նա վերածվել էր յուրօրինակ հյուրախաղային-արտագնա թատերախմբի, որտեղ միախառնված էին արվեստը, գբոսաշրջությունը եւ ազատ ծեռնարկությունը: Հոդարտորեն այլի ընկնող խմբի առանձին լիդերները, որոնցս կանոն, մոռանում էին, որ իրենց ձայների փայլն ապահովվում է կոլեկտիվի ընդհանուր մակարդակով, քանզի երաժշտական թատրոնը (ավելի շատ, քան դրամատիկականը) կառուցվում է բաղկացուցիչ տարրերի փոխադարձ զուգակցության վրա:

Կարծում եմ, կգա բոլոր օբյեկտիվ ու սուբյեկտիվ դատճառների հավաքմամբ վերջին տասնամյակում Հայաստանի երաժշտական հաստատությունների ու կազմակերպությունների գործունեության մանրակրկիտ վերլուծման ժամանակը: Գուցե այդ ժամանակ կկարողանանք ավելի լավ գնահատել ամեն ինչին հակառակ հայրենական արվեստի բարգությանը ծառայած մարդկանց անձնվիրությունը, ինչպես նաեւ արդարացնել այն երաժիշտների արտագաղթը, ովքեր կորցրել են ավելի իրականությանը դիմակայելու հույսն ու ուժերը:

Ընդսմին ամենացավալին այն է, որ հոգեւոր արժեզրկումը հաճախ հարիր-վում է մշակույթի առանձին «մագնատների» կողմից:

Բայց վերադառնանք հոդվածի նյութին: Օպերային թատրոնի համակարգում սկսված ներքին վերակառուցումն այս անգամ գլխավորում է նոր գեղարվեստական ղեկավար, աշխարհահռչակ տենոր Գեղամ Գրիգորյանը: Նրա նշանակումից արդեն քիչ անց երեւանցիների դատին ներկայացնելով Ջուզեպպե Վերդիի «Տրավիատա» օպերան (համերգային կատարմամբ), թատրոնի կոլեկտիվը վկայեց հետեւյալը:

Առաջին. կատարողական ուժերի համախմբում: Այդ նպատակով թատրոն են հրավիրվել երիտասարդ երգիչներ՝ երեւանի կոնսերվատորիայի նախկին ուսանողներ կամ ներկայիս ասպիրանտներ, որոնք դատրաստ են հանդես գալ դատված դրոֆեսիոնալ մակարդակով: Թարմ ուժերի ներհոսը վաղուց էր սպասվում, քանի որ Հայաստանն այժմ ավելի, քան երբեւէ, վոկալ մեծ ներուժ ունի: Այդ ներուժի ամբողջությունը իրական սարազոր է ազգային վնասարարությանը: Չէ՞ որ անտեսված երգիչը ենթակա է որակավորումը կորցնելու վտանգին, ուստի նա հաճախանում է երգել նույնիսկ որեւէ եկեղեցական երգչախմբում, միայն թե երգի:

Ի դատիվ Գ. Գրիգորյանի դեմ է ասել, որ նա ջանքը դնում է երիտասարդ սերնդի վրա, որն ընդունակ է իր ուսերի վրա վերցնել վերակառուցման ծանրությունը: Գրիգորյանը հավատում է Հայաստանի տաղանդավոր երիտասարդությանը, իսկ վերջինս իր առաջան վստահում է փորձառու վարպետին: Այս հանգամանքի կարեւորությունը դժվար է գերագնահատել:

Երկրորդ. խաղացանկային խաղախաղանություն: Դրա հիմքում ընկած է թատրոնի հիշյալ կենսագործունեության սկզբունքը, որը զարգանում է ներկայացումների խաղացանկի ընդլայնման ու նորացման հաշվին: Նշենք, որ վերջին տարիներին օպերային թատրոնը խաղացանկ փաստորեն չուներ. 5-6 օպերային անվանում ունենալը վայել չէ նույնիսկ օպերային ստուդիային: Ներկայումս աշխատանքի՞ է սկսվել երեք օպերաների վրա, որոնցից առաջինը «Տրավիատան» էր: Ու թեեւ տնօրենությունը երեքն էլ նախատեսել է համերգային կատարմամբ, դրանք կարեւոր նախապատրաստական հիմք են ապագա բեմական մարմնավորման համար:

Երրորդ. ստեղծագործական հեռանկար: Բազմաթիվ երկրների առաջատար թատրոնների եւ առաջին հերթին Պետերբուրգի Մարիինյան թատրոնի հետ համագործակցող Գեղամ Գրիգորյանի նշանակումը մեր թատրոնի մոռացված հյուրախաղերը վերսկսելու, ինչպես նաեւ ուրիշ թատրոններից երեւան երաժիշտներ, բեմադրիչներ, բեմանկարիչներ հրավիրելու հեռանկար է բացում: Ա. Սպենդիարյանի անվան թատրոնի երբեմնի բնական գործունեությունը բազմաթիվ դատճառների բերումով ներկայումս ի չիք է դարձել, մինչդեռ կատարողական արվեստի եւ էստրադային-մասսայական ժանրերի բնագավառում հյուրախաղերի դրակտիկան շարունակվում է: Առանց մշակական ստեղծագործական փոխանակումների դժվար է դատկերացնել թատերական կոլեկտիվի կյանքը: Ի թիվս այլ բաների, հենց հյուրախաղերի եւ թատրոնի մենակատարների անհատական շփումների դրակտիկան է մեր երգիչների արտագաղթի կասեցման գործոններից մեկը:

«Տրավիատայի» վրա կատարված աշխատանքի արդյունքների էության առնչությամբ նախ եւ առաջ կուզենայի նշել վոկալ անսամբլները, որոնք սովորաբար մեր թատերախմբի թույլ տեղերից են: Վերդիի գլուխգործոցի համերգային դրեմիերան ուրախացրեց կատարման ներդաշնակությամբ՝ դրամատիկ երկխոսության տեսարաններից մինչեւ ավարտուն անսամբլային ծեւերը: Դրեմիերայի երկու երեկոների ժամանակ երկրորդ գործողության վերջում երգչախմբի հետ օկտետն ուրախացրեց ձայների ներդաշնակությամբ եւ դրանց հանրահայտ համարը՝ տեմբրային համահարթվածությամբ: Բեմի վրա Ալֆրեդի դերում Գրիգորյանի ներկայությունն, անկասկած, մոգական ազդեցություն գործեց բոլոր մասնակիցների վրա:

Իսկ ինքը՝ Գրիգորյանը, անսամբլային եւ մենեւգային դրվագներում ասես խնայում էր իրեն՝ թույլ չտալով, որ իր սմանչելի ձայնը բացահայտվի անհարգ: Ուստի շատ մտահոգվում էր ծավալվող դրամայի ռիթմով՝ հմտորեն կառուցելով ծեւերը, ետեւելով շրջադարձային իրավիճակները: Վերահսկողության տակ դահելով օպերայի ամբողջ գործողությունը, Գրիգորանը դրա հետ մեկտեղ խաղընկերներին սովորեցնում էր ազատ երկխոսությունից ճկունորեն անցնել զուգերգի, նրանց ուղղորդելով դեպի երաժշտական դինամիկայի գաղտնիքները: Գրիգորյանի փաստորեն բաց meisterklass-ը (վարպետության դասը) բացատրում էր, թե ինչպես կարելի է հենց միայն վոկալ խոսքի միջոցով կերպարը դարձնել թատերայնորեն տեսանելի: Փառաբանված երգչի բավչյա տեմբրը փոխվում էր խաղընկերոջ ձայնի հանմեմաս, եւ եթե երրորդ գործողության մեջ Անահիտ Մխիթարյանի հետ զուգերգելիս նա հակված էր հուզական աֆեկտների եւ տարերայնորեն զարգացող երաժշտական տեմպերի, ապա հասմիկ Հացագործյանի հետ Ալֆրեդ-Գրիգորյանը վշտալի, ստահույզ զգացմունքների իշխանության տակ էր, որոնք ներգործում էին օպերայի վերջնամասի ընդհանուր «մեղայական» մթնոլորտի վրա:

Դատճառը մատուցելով Գեղամ Գրիգորյանին, խոստովանենք, որ «Տրավիատան» կայացավ օպերայի գլխավոր հերոսուհու երկու դերակատարուհիների շնորհիվ: Հագեցվածությամբ դժվարագույն այդ դերերգերից մեկը ենթադրում է մեկնաբանությունների չափազանց լայն ընդգրկում: Երեւանյան թատրոնի առաջատար սոպրանոները Վիոլետային մեկնաբանում են՝ ելնելով սեփական արհեստական ու երգեցողական շրջանակներից: Հասկանալի է, որ ուրիշ երգիչներ եւս յուրովի կվարվեն:

Վիոլետա-Հացագործյանն ուժեղ է հոգեբանական հավաստիությամբ: Երգչուհին ընդգծում է իր հերոսուհու երկու դերակատարումները: Առանձնահատուկ ծայնածգման եւ հղկված ու նրբագեղ հնչողության միջոցներով նա համոզում է ճշմարտացիությանը: Վիոլետա-Մխիթարյանը սկզբից մինչեւ վերջ դրամայի կենտրոնում է: Կոլորատուրային սոպրանոյի վիրտուոզ հատկություններն ու փայլն անմիջապես գրավում են ունկնդիրների ուշադրությունը՝ նրանց ստիպելով հետեւել յուրաքանչյուր երաժշտական շարժմանը, դերերգերին ու երկխոսություններին: Հեշտությամբ կառավարելով իր գեղեցիկ ձայնի ճախրանքը, Մխիթարյանն ընդգծում է ճակատագրին հնազանդորեն ենթարկված հերոսուհու փխրունությունն ու կանացիությունը:

Կասկած չկա, որ օպերայի բեմական կատարման ժամանակ երկու երգչուհիներն էլ զգալի թվով նոր գծեր կգտնեն այդ բարդ կերպարի մարմնավորման համար, ինչպես նաեւ կիսկեն երաժշտական տեքստը: Ըստ էության դա վերաբերում է «Տրավիատայում» զբաղված նաեւ մյուս երգիչներին, այդ թվում Արկադի Մարտիրոսյանին եւ Առնոլդ Քոչարյանին, որոնք ժերմոնի դերակատարներն են: Քոչարյանի ոճը խիստ է եւ զուսպ: Ա. Կարապետյանի անվան հանրապետական մրցույթում հաղթելուց հետո նա երգում էր առանձնակի ջանադրությամբ՝ հոգալով անսամբլների եւ ռեցիտատիվների մասին: Մարտիրոսյանն, ընդհակառակը, ետեւում էր երկու արիոզոների կարեւորությունը, բայց բեմական տեսարաններում փոքր-ինչ «անջատված» էր:

Այո, դժվար է գտնել ժերմոնի մեկնաբանման բանալին. դրակա՞ն կերպար է նա, թե՞ բացասական: Համենայն դեպս, Վիոլետայի եւ Ալֆրեդի երջանկությունը հենց նա է կործանում: Երկու օժտված կատարողները պետք է հրաժարվեն այն ստատիկ անխոովությունից, որով նրանք այսօր ներկայացրին ժերմոնին:

Այս դերերգերն առավել համեստ են, բայց կատարողներն օպերայի բեմից իրենց դրսեւորեցին վստահության տարբեր չափերով: Առաջին հերթին նշենք փորձառու երգիչներ Ն. Բաղալյանին եւ Լ. Գրիգորյանին (Ֆլորա), ապա Ք. Սահակյանին եւ Ն. Ղազարյանին (Անինա), Մ. Ամիրխանյանին (Մարթա), Վ. Մարտիրոսյանին եւ Ռ. Կուրջանյանին (Գաստոն), Գ. Եղիազարյանին եւ Տ. Դավթյանին (Բարոն), Վ. Մակվեցյանին եւ Ռ. Թելունցին (բժիշկ):

Սիմֆոնիկ նվագախումբը (դիրիժոր՝ Յուրի Դավթյան) եւ երգչախումբը (ղեկավար՝ Կարեն Սարգսյան) ընդհանուր առմամբ արտացոլեցին Վերդիի օպերայի ընդհանուր տոնուսը, բայց դեռ շատ գործ պետք է արվի մանրամասների առումով: Երաժշտական տեխնիկի տեխնիկական լրամշակումից բացի, ուզում եմ նրանց մաղթել կերպարային բնութագրումների հարցում՝ նվազ ուղղամտություն, ինչպես նաեւ արտահայտչական ու դինամիկ ավելի մեծ հղկվածություն:

Այս ամենը պետք է իրողություն դառնա, քանզի առկա է լուրջ կոլեկտիվ աշխատանք, որը հիմնված է օպերային թատրոնը վերածնելու, ազգային արվեստի հայրենությունը դարձնելու ցանկության վրա:

ԱՎԵՏԻՍ ԱՍԼԱՆՅԱՆ
Երեւանի կոնսերվատորիայի
դրոֆեսոր

ԲՆՈՒԹԵՆԱՊԱՀՍ

Նկարիր առանց սեթեւեթանմների

Նիկոլ Աղաբաբյանի արվեստանոցում

Եթե ես հողը, ես երկիրը, ես մարդկանց չես սիրում, եթե քո մեջ առավոտ-իրիկուն ճշմարիտ, անխարդախ բանաստեղծություն չի ծնվում, եթե դու չգիտես, թե Նոյեմբերյանի դժվար հողում ինչքիսի դաժան երջանկություն է միրգ ու բանջար աճեցնելը, եթե ծնողներիդ, եղբայրներիդ, քույրերիդ ամեն օր, ամեն ժամ տեսնելը, նրանց հետ զրույցի նստելն ամենամեծ ցանկությունը չէ քո համար- մի գնա Նիկոլ Աղաբաբյանի դուռը: Եթե սիրուն խոսքը գրում ես հենց էնպես, սիրունության համար, եթե մեկն անվերջ-անդադար չի սաստում ճիշտ գրի, ճիշ գրի-մի գնա Նիկոլ Աղաբաբյանի դուռը: Եթե ես ամեն ինչը կա քո մեջ, ունես ու գնացել-հասել ես աշխարհի 2692417 նկարիչներից մեկի Նիկոլ Աղաբաբյանի արվեստանոցը, ապա լուռ նստիր. ինչ-որ բեզ պետք է ինքը կասի...

- Մարդը բնությունից զատվել է: Դժբախտաբար այնպես եղավ, որ մենք հիմա բնությանը կողքից ենք դիտում: Մենք չենք մտել բնության մեջ, բնության մասը չենք զգում: Կողքից կանգնել, դիտում ենք բնությունը եւ բնության երեւույթները փորձում ենք մեր միջոցով սինթեզել եւ այդպես հասկանալ բնությունն ու տիեզերքը: Ես հիմա եկել, հասել եմ այն համոզման, որ կողքի կանգնած դիտող չլինեմ, այլ ես ու բնությունը նույնականանք: Առավել ներդաշնակ լինելու դեպքում ես կկարողանամ ավելի ու ավելի ճիշտ հասկանալ տիեզերքն ու մարդուն...

Սա իր խոսքն է: Իսկ իր նկարն առավել ճիշտ է թարգմանում իր մեջ եղածը:

...Փափուկ, մաքուր, դայծառ գույներով է նկարված: Լարերին հագցված է բեղ: Հետո եկել են ավելի խիստ գույներ, ավելի կտրուկ վրձնահարվածներ, ժամանակն է թելադրել տրամադրությունը: Եղել են նաեւ ժամանակներ, երբ երեք-չորս ամիս ծեռքը վրձին չի վերցրել, որովհետեւ Շուշիում է եղել եւ Այգեդարի մոտ Հայաստան երկրի սահմանն է դահել: Բայց ուր էլ գնացել է, միեւնույն է, տուն է եկել, մտել իր արվեստանոցը (արվեստանոց ասած բանը շատ ժամանակ, տարիներ շարունակ իր բնակարանի մի անկյունն է եղել): Անվերջ հոգեկան երթեւեկի մեջ է ու ինքն էլ չգիտե, թե երբ է հանգստանալու...

Ժամանակներն արագ-արագ փոխվում են, մարդը հարմարվում է նոր դայմաններին: Բայց այս հարմարվողականությունը եթե պետք է ոգիդ կոտրի, ուրեմն դու թույլ ես, ու ցանկացած ժամ բեզ կարող է իր ճորտը դարձնել: Չէ, Նիկոլ Աղաբաբյանն էդպես չէ: Հակա աշխարհում իր աշխարհն է ստեղծել ու այս աշխարհում լեռներ, կորդեր, վարած դաշտեր, ծաղիկներ է ստեղծում, այն մարդկանց է տեղավորում, որոնց սիրում է եւ որոնք իրեն են սիրում, իրեն հասկանում: Ճիգեր չի թափում, արու կանայք եւ փալնոս տղերք չի նկարում, անիմաստ սիրունություն չի դնում իր սարերի, ծորերի, գյուղերի, անգամ Փարիզի փողոցների մեջ ու... Ու ամեն ինչ ճշմարիտ, նաեւ բանաստեղծական է դառնում, արվեստի գործ, Նիկոլ Աղաբաբյանի գործ: Այսինքն ճշմարիտ արվեստ է: Բազմաթիվ ցուցահանդեսներ է ունեցել եւ Հայաստանում, եւ Հայաստանի սահմաններից դուրս, մի քանի ամիս բախտ է ունեցել Փարիզում աշխարհի արվեստների մայրաքաղաքում աշխատելու: Ու լավ գիտի, թե աշխարհը մեզանից ինչ է ուզում, մենք ինչ կարող ենք տալ աշխարհին, որպեսզի ճիշտ նկարագիրն ունենան ուրիշները:

- Վաղուց արդեն ժամանակն է, ասում է, աշխարհի արվեստի կենտրոններում հայ արվեստի տեր ստեղծելը: Դեռ այդպիսիք չկան, որ մշակական գործեն, որ ցանկացած ժամանակ կարողանանք ներկայացնել մեր ազգային ամենամեծ հարստությունը՝ հայ մշակույթը: Դրա համար պետք է ծրագրված աշխատանք տանել, համաթեատրական, համազգային: Եվրոպայում եւ Ամերիկայում մեծ ուշադրություն կա նախկին խորհրդային Միության տարածքում ապրող ժողովուրդների մշակույթների նկատմամբ: Եվ դա բնական է: Սա իրենց համար անծանոթ մի տարածք է եղել: Երկկողմանի հետաքրքրություն կա: Ու քայլերը հերթականությամբ արվում են...

Ամեն անգամ, ամեն հանդիպման խոսելու բան միշտ էլ կգտնվի: Բայց իր գործը նկարելն է, թող նկարի, թող այդպես խուզի՝ նկարով: Առավել եւս, որ ինքը բողոքելու, նվնվալու, քարկոծելու բնավորություն չունի: Ինքը նկարում է եւ դա հերիք է եւ իրեն, եւ մեզ, որովհետեւ ճիշտ է նկարում, առանց սեթեւեթանքի:

ԳՈՌԱՐ ՄԱՐՈՅԱՆ

ՕՐՎԱԾՔՅԱ

Դեկտեմբերի 4

- Հին հայկական տոմարով Տրէ ամսվա Մարգար օրն է:
- 1818 թ. ծնվել է Ֆրանսիացի գրող Շաղլ Ֆրանսուա Գունոն:
- 1257 տարի առաջ մահացել է Ֆրանսիացի գրող Պիեռ Դոնիկիոն:
- 1922 թ. ծնվել է Ֆրանսիացի դերասան Ժերար Ֆիլիպը:
- 1945 թ. մահացել է ամերիկացի գիտնական-կենսաբան եւ գենետիկայի հիմնադիրներից մեկը՝ Թոմաս Մորգանը:

Դեկտեմբերի 5

- Հին հայկական տոմարով Տրէ ամսվա Սիրանի օրն է:
- 1791 թ. մահացել է ավստրիացի կոմպոզիտոր Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը:
- 1814 թ. մահացել է Ֆրանսիացի բանաստեղծ էվարիստ Պարնին, որի քնարերգությունն առանձնանում է բերթեւ շնչով, էրոտիկ երանգներով եւ նրբին զգացմունքներով:
- 1820 թ. ծնվել է ռուս բանաստեղծ Աֆանասի Ֆետը:
- 1870 թ. մահացել է Ֆրանսիացի գրող Ալեքսանդր Դյումա-հայրը:
- 1901 թ. ծնվել է ամերիկացի ռեժիսոր, կինոռեժիսոր Ուոլթ Դիսնեյը:
- 1757 թ. ծնվել է անգլիացի բանաստեղծ եւ նկարիչ Ուիլյամ Բլեյքը:

Դեկտեմբերի 6

- Հին հայկական տոմարով Տրէ ամսվա Մաղդեղ օրն է:
- 1778 թ. ծնվել է ֆիզիկոս եւ քիմիկոս Ժոզեֆ Գեյ-Լուսակը:
- 90 տարի առաջ մահացել է Պիեռ Պոնշյանը:
- 1926 թ. մահացել է Ֆրանսիացի նկարիչ Կլոդ Մոնեն:
- 1956 թ. մահացել է Դերենիկ Դեմիրճյանը:

ԱՆՈՒՇ ԹԱՐԱՄՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ՍԱՀՄԱՆ

Մեր շախմատիստները դահիճանում են դիրքերը

Աջարիայի մայրաքաղաք Բաթումում շարունակվում է շախմատի Եվրոպայի 12-րդ թիմային առաջնությունը:

Մրցումների 4-րդ տուրում Հայաստանի տղամարդկանց հավաքականը հանդիպեց Հունգարիայի թիմի հետ: Առաջին խաղաշախտակի վրա Սմբատ Լպուտյանը ոչ-ոքի ավարտեց իր հանդիպումն աշխարհի ուժեղագույն շախմատիստներից մեկի Պետեր Լեկոյի հետ: Երկրորդ խաղաշախտակի վրա դժվարին փորձություն էր սպասվում Արսաշես Մինասյանին: Որոշ շախմատիստուհիներ ժամանակ առ ժամանակ հանդես են գալիս տղամարդկանց մրցումներում, ապա հունգարուհի Հուդիթ Պոլգարը բացառապես ուժեղ սիրի նիստերի հետ է մրցում: Իհարկե, տղամարդ շախմատիստների համար կանանց դեմ խաղալը հոգեբանորեն դժվար է, քանի որ պարտվելու վտանգը կաբկանդում է նրանց: Արսաշեսը Հուդիթին քանիցս հաղթել է արագ եւ կայծակնային պարտիաներով, բայց այս անգամ մեր շախմատիստը, հանդիպելով Պոլգարի հետ, գիջեց: Երրորդ խաղաշախտակի վրա ոչ-ոքի ավարտվեց Լեւոն Արոնյանի եւ Զոլթան Ալմաշիի հանդիպումը: Մեր թիմին միակ հաղթանակը բերեց պատանի Լեւոն Արոնյանը. նա առավելության հասավ փորձառու Ալեքսանդր Չեռնինի նկատմամբ:

Այսպիսով, չորս տուրից հետո Հայաստանի հավաքականը շարունակում է գլխավորել աղյուսակը: Մեր շախմատիստները 16 հնարավորից վաստակել են 11,5 միավոր: Երկրորդ-երրորդ տեղերում են ընթանում Հունգարիայի եւ Բուլղարիայի հավաքականները, որոնք 10,5-ական միավոր ունեն:

Չորրորդ տուրում 2-0 հաշվով վստահ հաղթանակ տարան Հայաստանի շախմատիստուհիները, որոնք արագորեն սպանիել էին նախորդ հանդիպման ժամանակ կրած անհաջողությունից: Մրցելով Հոլանդիայի ներկայացուցիչների հետ՝ Լիլիա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը պարտության մատնեցին նրանց: Այժմ Հայաստանի թիմը տեղ է զբաղեցնում մրցաշարային աղյուսակի վերին մասում:

Ռ. Ա.

Ավանդույթը վերականգնվեց

Չորսամյա ընդմիջումից հետո Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում անցկացվեց ավանդական, թվով 28-րդ սպարտակիադան, որին մասնակցեց 940 ուսանող մարզիկ:

Մեկ ամիս տեւած մրցաշրջանում ուսանողները թիմերով եւ անհատական կարգով իրենց ուժերը չափեցին 20 մարզաձեւերում: Սպարտակիադայում ամենաշատ մասնակից ունեցավ առաջին կուրսը (238 տղա, 28 աղջիկ):

Թիմային հաշվարկներով տեղերը բաշխվեցին հետեւյալ կերպ (որքան զարմանալի է՝ կուրսերի հերթականությամբ). առաջին տեղում է առաջին կուրսը, հաջորդ երեք տեղերում՝ համապատասխանաբար երկրորդ, երրորդ եւ չորրորդ կուրսերը: Ընդ որում, առաջին եւ չորրորդ կուրսերն առաջին տեղ գրավեցին վեցական, երկրորդ կուրսը՝ հինգ, երրորդ կուրսը՝ երեք մարզաձեւից:

Սպարտակիադան անցավ բարձր մակարդակով, համառ եւ անզիջում պայքարի, անաչառ մրցավարության պայմաններում: Ուսանող մարզիկների ցույց տված արդյունքները վկայում են, որ նրանք կարող են իրենց լավ դրսեւորել նաեւ հանրապետական եւ միջազգային մրցաշարերում: Այսպես, Վահագն Ջավախյանը 100 մ վազքում ցույց տվեց 10,4 վրկ արդյունք, որը 0,2 վրկ-ով գերազանցում է սպորտի վարպետի նորմն: Վեց ծանրամարտիկներ տարբեր քաշային կարգերում լրացրին սպորտի վարպետի նորմն: Նրանցից Վիգեն Խաչատրյանը (77 կգ) ցույց տվեց միջազգային կարգի սպորտի վարպետի նորմա (երկամարտում 335 կգ արդյունք): Բարձր արդյունքներ ունեցան մի շարք ատլետներ եւ լողորդներ:

Նոյեմբերի 1-ին ինստիտուտի մեծ դահլիճում, ուսանողության եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցությամբ, ամփոփվեցին սպարտակիադայի արդյունքները: Այդ առթիվ զեկուցմամբ հանդես եկավ ՖԻՄԱ-ի նախագահ Կարապետ Կարապետյանը:

Սպարտակիադայի գլխավոր մրցավար, ինստիտուտի ուսումնական հարցերով պրոռեկտոր, պրոֆեսոր Միխայել Իսպիրյանն իր ամփոփման խոսքում մասնավորապես նշեց ուսանողների մարզական վարպետության բարձրացման անհրաժեշտությունը:

ԱՐՏԱՎԱԶԴ ՍԱՔՈՆՅԱՆ

Աշխարհի գավաթը՝ Ռուսաստանի հավաքականին

Ճապոնիայում ավարտվեց աշխարհի գավաթի խաղարկությունը, որին տղամարդկանց 12 հավաքականներ մասնակցեցին:

Մրցումների ավարտից դեռեւս մեկ տուր առաջ հայտնի դարձավ գավաթակիրը. դա Ռուսաստանի հավաքականն է: Ռուսները վերջին տուրում պարտություն կրեցին իսպանացիներից, իսկ բարձր տեղերի հավակնող մյուս թիմերի խաղերն այսպես ավարտվեցին. Կուբա-Իտալիա 3-1, ԱՄՆ-Կանադա 3-1:

Գավաթի խաղարկության մրցաշարի առաջին վեցյակն այսպիսին է. 1. Ռուսաստան 20, 2. Կուբա 19, 3. Իտալիա 19, 4. ԱՄՆ 19, 5. Բրազիլիա 18, 6. Իսպանիա 18 միավոր:

Ռուսաստանի, Կուբայի եւ Իտալիայի հավաքականներն իրավունք նվաճեցին հանդես գալու 2000 թ. Սիդնեյի օլիմպիական խաղերում:

Մրցանակային խաչբառ

ՃԻՇՏ ԼՈՒԾԵԼՈՎ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՉԲԱՌԸ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԱՌԱՋԻՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ «ԱԶԳ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿԸ:



Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Երաժշտության մեջ հնչյունաշարի որեւէ աստիճանը կես տոն իջեցնելու նշագրական նշան: 2. Գերմանացի հայագետ, լեզվաբան: 3. Վանհահամալիր Արցախում. Ջարքաս գետի ձախ ափին: 4. Աֆղանստանի պետական լեզուներից: 5. Սահմանական պետություններում այլակրոն համայնքներին պատկանող հպատակներ: 7. Հին հունական դիցաբանության մեջ ննջեցյալների հոգիներն իր մակույկով Հադեսի թագավորություն փոխադրող: 8. Լիճ Իրանում: 9. Սնվելու մեկկված համակարգ: 10. Գունավոր թելերից եւ ծաղիկներից կարված փունջ, որը պետք է գալիս Ջանգյուլումի տոնի արարողությունների ժամանակ: 15. Հայազգի թենիսիստ: 16. Կովկասում ապրող ժողովրդի ներկայացուցիչ: 17. Սեւ ծովի ափին գտնվող առողջարանային քաղաք: 18. Աշխարհահռչակ նեգրուհի մոդելյորի անունը: 20. «Ամերիկա», «Պոյակ» անվարս վեթերի հեղինակը: 21. Հունաստանում հնում օգտագործվող սենգաթիղ երաժշտական գործիք: 24. Հայ շախմատիստ: 25. Հայկական հնագույն խաղ: 26. Կենսատու հեղուկ: 28. Գեսնափորում ապրող միջատակեր կաթնասուն: 29. Հայկական օրաթերթ: 30. Տխրություն, տրտմություն: 31. Տնային գործածության իր: 32. Քաղաք Բելառուսում: 33. Մոլորակ:

Հորիզոնական

1. 816-837 թթ Ստրպատականում եւ Արեւմտյան Իրանում ծագած խուրամյան շարժման ղեկավարը: 4. Ջարդաքար: 6. Բրազիլացի գրող, հասարակական գործիչ: 7. Ֆրանսիացի հրաբարակախոս, փիլիսոփա: 9. Պրիմիտիվ բուսակեր կաթնասուն, ծարպուկ: 11. «Գուլիվերի ճանապարհորդությունը» գրքի հեղինակը: 12. Նորմա, վերջնասահման: 13. Ուռազգի ծառ: 14. Գետ Էստոնիայում: 17. Նոբելյան մրցանակակիր հրեա գրող: 19. Որնախորը: 22. Հայ դերասան: 23. «Հայրավաքի երգը» պոեմի հեղինակը: 25. Պետություն Հյուսիսային Աֆրիկայում: 27. Իրանում դրամական միավոր: 4 շահանոց արծաթադրամ: 28. Արեւելյան ժողովուրդների դասական գրականության մեջ որեւէ հեղինակի հինգ պոեմների համակազմությունը: 30. Ա. Ֆրանսի ստեղծագործություններից: 32. Ֆրանսիացի «թվաբաղաբաս» նկարիչ: 34. Գյուղ Հայաստանում, Ջուանշանից հարավ-արեւելք: 35. Չկնաստեակ: 36. Սենեգալի Հանրապետության մայրաքաղաքը: 37. Երեւանում զբոսաշրջիկության գործով զբաղվող ՄՊԸ: 38. Սպեղանի, շորի վրա խված բալասան: 39. Միասմբակավոր կաթնասուն, գետակինճ:

Կազմեց է ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Հորիզոնական

7. Եվգենիկա: 8. Ռուսաստան: 9. Ռոկոսովսկի: 12. Դրեյկ: 13. Կալման: 14. Քուրսի: 17. Էնտերիս: 18. Կումայրի: 19. Աժմական: 21. Մաստենի: 25. Վանյա: 26. Բերգեն: 27. Ակորդ: 30. Սխմաղուլինա: 31. Սկանվորդ: 32. «Ոդիսական»:

Ինտերմոթոր Արմենիա ՀՁ ՓԲԸ • Intermotor Armenia JV CJSC

M-class
Ճանապարհը Ձերն է
Own the Road

ԳՐԱՍԵՆՅԱԿ ԵՎ ԱՎՏՈՄՈՐԱՀ
Արամի 2, Երեւան 375010
Հայաստանի Հանրապետություն
Հեռ. (374-2) 52-80-85
(374-2) 58-12-75
Ֆաքս. (374-2) 56-51-79
(374-2) 15-18-50
Էլ.փոստ. intmot@arminco.com

OFFICE & SHOWROOM
2 Arami St., Yerevan 375010
Republic of Armenia
Tel.: (374-2) 52-80-85
(374-2) 58-12-75
Fax: (374-2) 56-51-79
(374-2) 15-18-50
E-mail: intmot@arminco.com

Mercedes-Benz
Ավտոմոբիլի ապագան

digitised by A.R.A.R.@

ՀԱՅՆԵՐԱԲԱՆԿԸ
առաջարկում է...
փոքր ֆինանսական ծրագրերի
կարճաժամկետ վարկավորում

- Գործող բիզնեսի ցանկացած ոլորտ
- Անհատ ձեռներեցների եւ իրավաբանական անձանց
- Շարժական սեփականության գրավադրմամբ
- Ազգային արժույթով

Վարկի առավելագույն չափը ◆ 1.500.000 դրամ
Վարկի առավելագույն ժամկետը ◆ 6 ամիս
Ամսական տոկոսադրույքը ◆ 3–4%

☎ 564-073

ԱՄԱՆՈՐՅԱ ՎԻԾԱԿԱՅՈՂ
ՀԱՅՆԵՐԱԲԱՆԿ

Մասնակցում են բոլոր ավանդատուները

3 Մրցանակ՝ մեկական «Տիգրան Մեծ» ոսկեդրամ

Դեկտեմբերի 1-ից 30-ը ավանդ ներդրողների համար կխաղարկվի լրացուցիչ ևս 12 մրցանակ՝ մեկական «Անահիտ» ոսկեդրամ

Ավանդների տոկոսադրույքները

Ժամկետը (օր)	ԱՄՆ դոլար (%)	ՀՀ դրամ (%)
20-ից 30	11.0%	18.0%
31-ից 91	16.0%	26.0%
92-ից 182	16.5%	28.0%
183-ից 273	17.5%	28.5%
274-ից 365	18.0%	30.0%

☎ 565-873

ARMENTEL

Արմենտելը հայտարարում է

1999 թ. նոյեմբերի 15-ից ՀՀ բնակչությանն ընձեռված է ավտոմատ միջքաղաքային կապի հնարավորություն Ռուսաստանի Դաշնության հետեւյալ ուղղություններով, որոնց համարհավաքման կարգը հետեւյալն է.

Տարածք	Համարհավաքման կարգ
1. Բրյանսկ	007+083+2 XXXXXX
	007+083+22 XXXXXX
2. Սմոլենսկ	007+081+2 XXXXXX
	007+081+22 XXXXXX
3. Տուլա	007+087+2 XXXXXX
4. Տամբով	007+075+2 XXXXXX
5. Նիժնի Նովգորոդ	007+831+2 XXXXXX
6. Կուրսկ	007+071+2 XXXXXX
	007+071+22 XXXXXX
7. Բելգորոդ	007+072+2 XXXXXX
8. Կոստրոմա	007+094+2 XXXXXX
9. Վորոնեժ	007+073+2 XXXXXX
10. Պավլով-Պասադ	007+09643 XXXXX
11. Ռյազան	007+091+2 XXXXXX
Ռյազան (քաղաքային)	007+901981+ XXXX
12. Տվեր	007+082+2 XXXXXX
	007+082+22 XXXXX
13. Կաշիրա	007+09669 XXXXX

ՍՐՄԵՆՏԵԼ ՀՅ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՅՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՅՍԱՐՎՈՒՄ Է Մասիսի «Սիս» համալսարան արտադրական կոոպերատիվի «Փարոս» ուսումնական կենտրոն» դուստր ձեռնարկությունը: Ռեգիստրի թիվ՝ 044009, սերիա՝ 01Ա, գրանցման թիվ՝ 27307002474, գրանցման ամսաթիվ՝ 21.12.98 թ., գրանցված է Մյասնիկյանի պետեգիստրի բաժնում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՔ
ԱԶԳ ՁԵՌՔ ԳՆԵՐՈՎ

Ամսական բաժանորդագրություն
~~2100~~ 2000 դրամ

Եռամսյա բաժանորդագրություն
~~6300~~ 5000 դրամ

Վեցամսյա բաժանորդագրություն
~~12600~~ 9000 դրամ

«Ազգ» կարող եք բաժանորդագրվել «Հայմամուլի» գործակալություններում եւ «Հայփոստի» բաժանմունքներում:

ՀԵՌՈՒՍՏԱՑՐԱԳՐԵՐ

4 դեկտեմբեր

17.00, 21.00, 00.00 Հայլուր
17.20 Մուլտֆիլմ «Այսոիսի գործեր»
17.40 Հող եւ ջուր
18.00 Մարզաշխարհ
18.30 Հանդիպում Տիգրան Մարտիրոսյանի հետ
19.00 Խորան լուսո
19.10 Կարոս
19.30 Հեռուստասերիալ «Կրթեր»
20.00 Կարծիք
20.25 Կամուրջ. «Հայկական Ամերիկա»
21.35 Պրեմիերա
21.45 Զինուժ
22.20 Բոհեմ
23.00 Գ/Ֆ «Գիշերվա ցրտին»

11.00 «Ինչպես հասնել կատարելության». Չեյփինգ Սինդի Քրոուֆորդի հետ
12.00 Տոմար
14.00 Ոչ նշանավոր մարդկանց կյանքը
14.15 Հրապարակ
14.25 Մրցամարտ
15.25, 19.10 Մուլտֆիլմեր
15.55 «Ալիսան հրաշքների աշխարհում»
18.00 Հմայիլ
18.25 Ալամբուլիկ
18.50 Մամուլի խոսնակ
19.30, 21.30, 23.30, 02.30 Սուրհանդակ
19.55 Խորհրդավոր Աֆրիկան
20.20 Վ/Ֆ «Փարոի»
21.10 Չղջիկ
21.50 Համերգ
22.15 Հեռագիծ
23.05 Ոսկե սրինգ
00.00 Անդորր
00.05 Երաժշտական դադար
00.10 Սուք սենյակ
00.30 Գ/Ֆ «Ռոնին»

Պրոմեթեւս
11.05, 18.20 Մուլտֆիլմ
11.25 Երաժշտական խոհանոց
11.55 Կ/Ե «Էռնեստի թագավորական նեստը»
18.00, 23.00 Լուրեր
18.30 Գ/Ֆ «Գուլիվերը» (1-ին մաս)
20.00 «Սոլի բանալի»
21.00 Միասին+
22.30 ... եւ Շուբան Պետրոսյան
22.00 Գ/Ֆ «Պաշարում»
23.40 ԱՐՏ-ակումբ
00.10 Գ/Ֆ «Խաթարում»

09.00, 11.00, 16.00, 19.00 Նորություններ
09.10 Հոգեւոր հովվի խոսքը
09.25 Տնային գրադարան
09.40 Սերիալ «Կուստոյի թիմի բոլոր ճանապարհորդությունները»
10.30 Նվագիր, հարմոն սիրելի
11.10 Սմակ
11.30-16.00 Բիզնես TV
16.10 «Ժամանակում կորածները»
17.00 Մուլտայրբեն
17.35 Կորուստյալը որոնելիս
18.15 Թեմա
19.10 Սոյա գուլակիր
19.50 Գ/Ֆ «Իտալացիների անհավատալի արկածները Ռուսաստանում»
21.40 Երալաշ
22.00 Ժամանակ
23.10 Սերիալ «Չինացի ոստիկանը»
00.05 Համառուսական յաստուերգանների սուպերգավաթ. «Էխ, Սեմյոնովնա»
00.45 Սերիալ «Հազարամյակ»
01.40 Գ/Ֆ «Անասնաբակ»

09.00 Մուլտծրագիր
09.30 Հայրիկը, մայրիկը, ես սպորտային ընտանիք եմք
10.30 ՊՏՊ-ի փոստը
11.00 Բարի լույս, երկիր
11.35 Ինքդ քեզ ռեժիսոր
12.05 Հեռուստախաղ «Հարյուրը մեկին»
12.55 Լավ նորություններ
13.25 Էհ, ճամփաներ
13.40 Ոսկե բանալի
14.00, 22.00 Լուրեր
14.20 Դաշնություն
15.00 Ուրմաս Ossp... հետ
16.00 Թոք-շոու «Անուշ լինի»
17.05 Մուլտսերիալ «Գաղտնի գործակալները» (ԱՄՆ)
18.00 Ակունա մատատա
19.00 Իմ ընտանիքը
20.05 Երկու դաշնամուր
20.55 «Անշլագ» եւ ընկ.
22.45 Ռոման Կարցեւի բենեֆիսը
00.45 Գ/Ֆ «Հրեշների եւ մարդկանց մասին»

5 դեկտեմբեր

10.05 Առավոտ լուսո
10.15 Բարեւ
11.45 Շախմատ 64
12.00 Զինուժ
12.35 Մեր էկրանը
13.05 Մարդը եւ բնությունը
13.30 «Լեգո» հեռուստամրցույթ
14.00 Ուրախների եւ հնարամիտների ակումբ-99. Սեւանի երաժշտական փառատոն
14.40 Երգենք ու ժպտանք
15.30 Գ/Ֆ «Դարանյանի դուստրը»
17.40 Կրկեսային ծրագիր
18.10 Արծաթե բանալի
18.40 «Հայորդաց տներ»
18.50 Երկիր ավետյաց
19.30 Համով զրույց
20.00 Խորհրդարանական ժամ
20.30 Բումերանգ
21.00 Օրակարգ
21.35 «Վայլուր» արտատեղեկատվական ծրագիր
21.40 Պրեմիերա
22.00 Մանրամասներ
22.10 Համայնքարտատկեր
22.50 8 1/2 Գ/Ֆ «Հարեւանուհին»

11.00 «Ինչպես հասնել կատարելության». Չեյփինգ Սինդի Քրոուֆորդի հետ
12.00 Տոմար
14.00 Ոչ նշանավոր մարդկանց կյանքը
14.15 Հրապարակ
14.25 Գ/Ֆ «Երիտասարդ յանկիի արկածները Արքուր արքայի դպրատում»
15.55 Մուլտֆիլմեր
16.10 Հեռագիծ
17.05 Գիտաստեղծ
17.30 Համերգ
18.00 Գ/Ֆ «Կլեոպատրա»
21.10 Չղջիկ
21.30 Խուժան ալիք
22.00 Երաժշտական վերհուշ
22.30 Ոգնի շոու
23.00 «Յոթ քար» լրատվական-վերլուծական ծրագիր
23.30 Լուսնի հակառակ կողմը
00.00 Գ/Ֆ «անծանոթը»

Պրոմեթեւս
11.05, 16.40 Մուլտֆիլմեր
11.25 Գ/Ֆ «Ծերունին եւ ծովը»
13.00 Հազարամյակների ժառանգությունը
13.20 Ճանապարհորդություն
13.40 Գ/Ֆ «Գուլիվերը» (2-րդ սերիա)
15.10 Պուլ-պուլ
15.30, 13.30 «Պրոմեթեւս» հեռուստաալիքը ներկայացնում է
15.50 Դասական երաժշտություն
17.00 Կուլիսների հետեւում
17.20 Գ/Ֆ «Կտոր մը երկինք»
19.25 «Սիլլենիում»
19.45 Վ/Ֆ «Բռնության վերջը»

09.00, 11.00, 16.00, 19.00 Նորություններ
09.10 Զինվորական խանութ
09.40, 17.25, 17.50 Դինեյ-ակումբ
10.10 Վաղորդյան ասող
11.10 Անլուրջ նոթեր
11.30 Քանի դեռ բոլորը տանն են
12.05 Սերիալ «Ալֆ»
12.35 Առողջություն
13.05 Գ/Ֆ «Հավատարիմ Ռուսլանը»
15.05 Ճանապարհորդների ակումբ
15.45 Ռուսական թանգարան. մի գլուխգործոցի պատմություն
16.10 Սերիալ «Ժամանակում կորածները»
16.55 Գիտունիկները
18.20 Ինչպես է դա եղել
19.10 Ծիծաղի համայնատակեր
19.50 ՈՒՀԱ-99
22.00 Սերգեյ Դորենկոյի հեղինակային ծրագիրը
23.05 Գ/Ֆ «Պաշարման մեջ-2»

09.00 Ծառայում եմ հայրենիքին
09.25 Մուլտֆիլմեր
10.20 Մանկան շուրթերով
10.55 Բարի լույս, երկիր
11.30 «Անշլագ» եւ ընկ.
12.30 «Լիակատար մոդեռն»
13.00 Ռուսական լոտո
13.40 Գրքերի աշխարհը Լեոնիդ Կուրավլյովի հետ
14.00 Լուրեր
14.20 Խորհրդարանական ժամ
15.10 Սերիալ «Օրենք եւ կարգ»
16.05 Երկխոսություններ կենդանիների մասին
17.00 Հին բնակարան 1997 թ. (1-ին մաս)
18.00 Վավերագրական ֆիլմ «Ցունամի»
19.00 «Հայելու» առաջ
19.15 Գ/Ֆ «Միլիոնից մեկը»
21.00 Հայելի
22.00 Գ/Ֆ «Հարսնացուն Փարիզից»
23.40 Գ/Ֆ «Ընկերները»
00.10 «Վիվալդիի երաժշտության տակ». Սերգեյ Նիկիտինի եւ Վիկտոր Բերկովսկու համերգը
02.25 Հերթապահ բաժանմունք

6 դեկտեմբեր

17.00 Հայլուր
17.20 Մուլտֆիլմ «Ինչ գեղեցիկ է փայլում այսօր լուսինը»
17.30 Օրակարգ
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
18.45 Հայի բախտ
19.35 Առաջընթաց
20.05 Հասմիկ Պապյան
20.35 Տուն-տունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակատալոգ
21.45 Պրեմիերա
21.55 Անավարտ ծեռագիր
22.40 «Եկել եմ, որ մնամ» Կարեն Դեմիրճյանի հիշատակին
23.20 Փաստագրական կինոնկար «Ծի ծեռնակաբեռ»
23.40 Հենց այնպես
00.00 Հայլուր
00.20 Կեսգիշերային ճեպընթաց
01.20 Ռուբիկոն+

Պրոմեթեւս
9.05 Վաղ առավոտյան
10.00 Մուլտֆիլմ
10.30 Գեղֆիլմ
12.00 Լուրեր
18.00, 20.30, 1.20 Լուրեր
18.20 Գ/Ֆ «Չորի Միրոն»
21.00 Տեսաֆիլմ «Սահմանարտները»
21.40 «Այսօր»
22.00 Ծանոթ-անծանոթը
22.20 Տեսաֆիլմ «Հայրենյաց ոչաս ոչանները»
22.45 Ուշ երեկոյան
23.20 Տեսաֆիլմ «Զինվոր»
23.55 Գ/Ֆ «Նահատեսը»

9.00 Տոմար
ավարտին Յոթ քար (կրկնություն)
19.00 «Չղջիկը» ներկայացնում է. բնաշխարհ
19.30, 21.30, 23.30, 2.30 Սուրհանդակ
19.50 Ավետա
20.15 Մուլտֆիլմ
20.30 Ասպարեզ
21.10 Չղջիկ
21.50 Գ/Ֆ «Հարեւաններ»
24.00 Անդորր
0.05 Երաժշտական դադար
0.10 Գ/Ֆ «Համբուրգեր» բարձունքը»
2.05 Երաժշտական վերհուշ

7.00, 9.00 Բարի առավոտ
8.40, 9.45 Ընտրություններ-99
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալի դրեմիերա «Գազանների մենամարտը»
16.40 Ինչն ինչպես
15.55 Աստղային ժամ
17.25 ... Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.25 Սերիալ «Արագացված օգնություն»
19.55 Մենք եւ ժամանակը
20.40 Սերիալ «Սպասասարահ» (դերերում Վ. Տիխոնով, Ս. Բոյարսկի, Ս. Ուլյանով, Վ. Գլագոլեւա. 1-ին սերիա)
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Ընտրություններ-99
23.10 Սերիալ «Գաղտնի նյութեր». «X Files»
01.00 Հայլուր
01.40 Նորություններ
02.00 Դետեկտիվ «Մայլ Համեր»

7.30-10.20 Բարի լույս. Ռուսաստան
8.00, 9.00, 10.00 Լուրեր
9.20 Հերթապահ բաժանմունք
10.20 Հոմեոպատիա եւ առողջություն
10.30 Արենա-սպորտ
11.00 Հոմեոպատիա եւ առողջություն
11.10 Սերիալ «Գնչուհին»
12.00 «Մեր գաղտնիքի ամառը»
13.00 Հայելի
13.50 Հոմեոպատիա եւ առողջություն
14.00, 18.00, 20.00, 22.00, 02.00 Լուրեր
14.25 Հեռուստախաղ «Հարյուրը մեկին»
15.10 Սերիալ «Անտոնելա»
16.10 Սերիալ «Վայրի հրեշտակը»
17.00 Խանութ բազմոցի վրա
17.30 Մուլտֆիլմեր
18.25 Աշտարակ
18.55 Սերիալ «Կոմիսար Ռեքսը»
20.35 «Կլոր սեղան»
21.00 Հրապարակախոսական թոք-շոու «Ժողովուրդն ուզում է իմանալ»
21.20 «Սպիտակ թուրք» ակումբ
22.50 Դրեմիերա. Գ/Ֆ «Մաֆիայի վկան» (ԱՄՆ. 1-ին սերիա)
23.45 Հեռուստաֆիլմ «Մեր 90-ականները»
00.35 Հերթապահ բաժանմունք
00.55 Սպորտ+TV
02.20 Խանութ բազմոցի վրա

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (590000), տեղեկագրքով (1800 դրամ), սկավառակով (3600 դրամ), INTERNET ցանցով (www.arminco.com/spyur; spyur.acc.am; armscape.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արտակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատվեր 1165. Տպաքանակը՝ 4000. Ստորագրված է տպագրության՝ 3.12.1999. Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@